Ձեր բոլոր ունկնդիրներին եք նման կերպ դիմավորում: «Բա երկրի ղեկավարն է գալիս պետական կառույց, ինչպես նաեւ՝ մեր կառավարման ակադեմիան անմիջական ենթակայության տակ է, վարչապետի աշխատակազմի ՊՈԱԿ է համարվում, այլ կերպ ասած՝ իմ վերադասի վերադասն է գալիս, երկրի ղեկավարն է, բա ո՞նց եք կարծում»:

Կարդացեք՝ էջ 2



ԵՄ էներգետիկայի հանձնակատար Դեն Յորգենսենը երկու օր առաջ ԵՄ քաղաքացիներին կոչ է արել՝ խնայել վառելիքը. աշխատել տնից, վարել ժամում 10 կիլոմետր ավելի դանդաղ եւ օգտագործել գնացքներ՝ ինքնաթիռների փոխարեն: «Նույնիսկ եթե վաղը խաղաղություն գա, մենք շուտով չենք վերադառնա նորմալ կյանքի»,- ասել է նա:

Կարդացեք՝ էջ 5

Վաբանկ կարելի է գնալ բոլոր սիտուացիաներում, բացառությամբ երկրի համար ճակատագրական իրավիճակների: Թող ձեզ չթվա, թե, հա, Արցախը տվեցինք, խաղաղություն է, կարելի է նաեւ քաղաքական աճպարարությամբ զբաղվել: Առավել արդիական աղվեսները, երբ սկսում են տրվել ինքնամոռացության, չորս ոտքով են հայտնվում թակարդում:

Կարդացեք՝ էջ 5

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 58 (4192), 10 ապրիլ, ուրբաթ, 2026

www.hraparak.am



Պարզվում է՝ ԵՄ դիտորդները, իրենց առաքելությունը թողած, ժամանակի մեծ մասը զվարճանքի վայրերում են անցկացնում: Անգամ լուրջ միջադեպեր գրանցելիս ծածկադմփոց են անում, որպեսզի ստվեր չգցեն կեղծ խաղաղության վրա: Մեր տեղեկություններով, փետրվարի 24-ին Ծորժայի մոտակայքում դիտորդները հայտնվել են կրակահերթի տակ, երկու մեքենայով սահմանը հսկելու ընթացքում նրանց վրա կրակ են բացել, ընդ որում՝ դիտորդները կրել են նախատեսված տարբերանշաններ եւ ադրբեջանական կողմին նախապես տեղեկացրել իրենց այցի մասին: Տուժածներ չեն եղել, առաքելության անդամներն անմիջապես վերադարձել են իրենց մեքենաները, զեկուցել միջադեպի մասին Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարություններին: Սակայն այս մասին որեւէ կողմ հայտարարությամբ հանդես չի եկել՝ վախենալով խաթարել «խաղաղության» գործընթացը: Ի դեպ, պատմում են, որ դիտորդական խմբի ղեկավար Մ. Ռիտերի՝ Հայաստանից հեռանալուց հետո մնացած խումբը բարձիթողի վիճակում է հայտնվել, թերեւս հասկանում են, որ իրենց ներկայությունն այլեւս անիմաստ է, եւ սահմանում հսկողության փոխարեն իրենց ժամանակը զվարճանքի կենտրոններում են անցկացնում: Մեր ձեռքի տակ են հայտնվել լուսանկարներ, որոնցից երեւում է, որ դիտորդներն այցելում են սաունաներ, ռեստորաններ կամ պարզապես զվարճանում են բնության գրկում: Եվրոպացիների սիրելի վայրերը դարձել են Ծաղկաձորի «Դահուկ» ռեստորանը, Մարտունի քաղաքի «Խրճիթ»-ը եւ երեւանյան սաունաները:

Արցախի թեմի առաջնորդ, տիրադավ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը շարունակում է մեկուսացած մնալ սեփական հոտից: Չնայած լուրերին, որ զղջում է Փաշինյանին միանալու համար, սակայն որեւէ քայլ առայժմ չի ձեռնարկում: Ասում են՝ փորձում է Վեհափառի հետ հանդիպում ունենալ, սակայն մեր աղբյուրները կարծում են, որ այդ հանդիպումը կլինի միայն հրապարակային զղջումից հետո: Մեզ ասացին, որ թեմական առաջնորդարանում տեւական ժամանակ է՝ որոշել են Արցախի մշակութային ժառանգության արխիվներ պատրաստել՝ հավաքագրել եկեղեցիները, հուշարձանները եւ այլ կոթողներ, սակայն տիրադավը սեւերես է եղած, չի կարողանում դուրս գալ ժողովրդի մեջ, որ հնարավոր լինի այդ արխիվները ձեւավորել: Դիցուք՝ Ամարասում է բացվել առաջին դպրոցը, եւ այս փաստը վավերագրելու համար հարկավոր է գտնել ամարասցիների, լսել նրանց պատմությունները եւ թվայնացնել այն որպես մշակութային ժառանգությունը հավաստող ապացույցներ:

Տեռոր ու շանտաժ

Նորից նախընտրական փուլ է, եւ մենք դեժավյուի զգացում ունենք, 30 տարուց ավելի նույն տեսարաններին ենք ականատես լինում: Նորից իշխանությունը՝ քրտնմխած, ասֆալտ է անում, հաճախ՝ ոչ այնտեղ, որտեղ անհրաժեշտ է, այլ՝ որտեղ շատերը կնկատեն: Նորից իշխանությունը հանկարծ հիշել է, որ ժողովուրդն իր ժողովուրդն է՝ ուշադրության ու հոգատարության կարիք ունի, իսկ Հայաստանը միայն Երեւանը չէ: Նորից փորձում են կաշառել ընտրողին՝ ժամանակավոր արտոնություններ, շարքային մարդկանց համար հարցեր լուծել, տույժ-տուգանքներ ներել: Նորից շռայլ խոստումներ են տալիս, որոնց մասին ընտրվելուց հետո մոռանալու են: Դե, եթե 30 տարի կարողացել են խաբել ու քվե կորզել միամիտ ընտրողից, իսկ ընտրություններից հետո ճիշտ հակառակն անել, եւ այդ ամենի կրկնությունը դաս չի եղել հասարակության համար, ինչո՞ւ չպիտի նորից անեն: Ուրիշ մեթոդներ էլ են, իհարկե, կիրառել: Քվեատուփեր լցոնելուց եւ ձայն գնելուց մինչեւ ընտրական «տասովշչիկների» բանդաների օգտագործում: Բայց թող ձեզ չթվա, թե մարդու ձայնը 5 հազար դրամով գնելն ընտրակեղծարարություն է, իսկ պատերազմի սպառնալիքով, ադմինիստրատիվ տեռորով ու շանտաժով քվե կորզելը նվազ նողկալի է: 5 հազար դրամով իր ձայնը վաճառող մարդը գոնե կամովին է գնացել այդ գործարքին, իսկ պատերազմի շանտաժով մարդուց քվե խլողները նրան փակուղի են մտցնում, կեղծ այլընտրանք պարտադրում՝ օգտվելով նրա անտեղյակությունից, պատերազմի հանդեպ չհաղթահարած սարսափից, իր զավակների ֆիզիկական գոյությունն ու Փաշինյանի՝ իշխանության գլխին մնալը նույնացնելու կեղծ ներշնչանքից: Եվ ամենանողկալին այն է, որ կեղծվող ընտրությունների դեմ պայքարի լոզունգի տակ իշխանության եկածներն են սա անում:

Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» կուսակցությունն իր փակ համագումարից հետո հրապարակեց նախընտրական ցուցակի առաջին 36 թեկնածուի ցանկը: Ուշագրավ է, որ այդ ցանկում ներառված չեն «Նոր դարաշրջան» կուսակցության նախագահ Հարություն Հարությունյանի եւ «Միավորված հայեր» կուսակցության պատվավոր նախագահ, լիազոր ներկայացուցիչ Նաիրի Սարգսյանի անունները, որոնց հետ նախորդ շաբաթ Նարեկ Կարապետյանը հուշագիր ստորագրեց՝ «Ուժեղ Հայաստան՝ Սամվել Կարապետյանի հետ» անվանումով դաշինք կազմելու մասին: «Ուժեղ Հայաստանի» խոսնակ Մարիաննա Ղահրամանյանից փորձեցինք ճշտել՝ ինչո՞ւ այդ անունները ներառված չեն: Նա ասաց միայն, որ նախընտրական ցուցակն ամբողջովին կհրապարակեն ապրիլի 11-ին՝ Ազատության հրապարակում նախատեսված միասնության հանրահավաքի ժամանակ: ԸՕ վերջին փոփոխություններից հետո արգելվում է կուսակցությունների եւ դաշինքների դեպքում անձնանունների օգտագործումը:

ԳՅՈՒՄՐԻՆ ՔՊ ՉԻ ԸՆՏՐԵԼՈՒ

Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանը, որոշ տեղեկություններով, «վիզ է դրել»՝ Գյումրիում Սամվել Կարապետյանի համար ջախջախիչ հաղթանակ տանել: Չնայած նախորդ ընտրություններում նա աջակցում էր Ռոբերտ Քոչարյանին, սակայն հունիսի 7-ին նրա թիմը գործելու է Սամվել Կարապետյանի համար: Ղուկասյանի փեսան, որն այսօր կատարում է քաղաքապետի պարտականությունները եւ Գյումրու քաղաքապետի տեղակալն է, ընդգրկված է «Ուժեղ Հայաստան» կուսակցության ցուցակում. 25-րդն է: Վարդան Ղուկասյանն «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Ռուբեն Մխիթարյանի հոր մտերիմն է, վերջինս էլ որոշ ժամանակ համայնքապետարանում էր աշխատում: Դրանից բացի՝ Սամվել Կարապետյանը քաղաքի տոնական միջոցառումներին մեծ աջակցություն է ունենում: Նշենք, որ Ղուկասյանի ախոյան Մարտուն Գրիգորյանն էլ Գագիկ Ծառուկյանի «Առաջարկ Հայաստանին» քաղաքական թիմին է աջակցելու եւ այդ մասին հրապարակային հայտարարություն է արել: Իսկ Ռոբերտ Քոչարյանը, ըստ Գյումրու աղբյուրների, մնալու է տեղի դաշնակցականների հույսին: ՔՊ-ի հարցումներով էլ ամբողջ Հայաստանում ամենաքիչ աջակցությունն իրենք ունեն հենց Շիրակի մարզում:

ԱԿԱԴԵՄԻԱ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒՍԱՆՈՂ ՉԷ, ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՆԿՆԴԻՐ Է

Նիկոլ Փաշինյանը վերջին շրջանում ակտիվորեն լուսաբանում է Կառավարման ակադեմիայում իր ուսանելը, տեսանյութեր հրապարակում իր ժամանումից մինչեւ դասապրոցեսի ընթացքը, անգամ կիսվում մինչ դասապրոցեսը կերած շաուրմայի մասին պատմող տեսանյութով: «Հրապարակ»-ը զրուցել է Կառավարման ակադեմիայի ռեկտոր **Խաչատուր Ղազեյանի** հետ:

- Որքա՞ն ժամանակ է, որ ակադեմիան զբաղվում է պաշտոնյաների վերապատրաստմամբ: Նախկին իշխանությունների օրոք այս պրակտիկան գործե՞լ է:

- Բոլոր ժամանակներում էլ անցկացրել ենք, տարեկան շուրջ 2-3 հազար քաղծառայող, համայնքային ծառայողներ վերապատրաստել ենք, բայց վերջին տարիներին ավելի ենք ընդլայնել: Քանի որ գնման գործընթացով է իրականացվում պայմանագրերի կնքում: Անցած տարի, օրինակ, մենք իրականացրինք, բացի Երեւանից, շուրջ 900 ավագանու անդամների վերապատրաստում մարզերում: Վերապատրաստումն իրականացվում է եռաչափ ձեւաչափով, լինում է, որ դասախոսներն են գնում մարզեր, լինում է նաեւ, որ գալիս են ակադեմիա, կա նաեւ հեռավար մոդուլների տարբերակ:

- Նիկոլ Փաշինյանն ի՞նչ ծրագրով է մասնակցում դասընթացին:

- Նոր պիլոտային ծրագիր է, առանձին մոդուլային ծրագրեր ենք գրել՝ կառավարության որոշման հիման վրա: Ծրագիրը ղեկավարների կառավարչական արդյունավետության բարձրացման ծրագիր է: Նախատեսված է 40 ակադեմիական ժամ, 10 մուտք, այսինքն՝ յուրաքանչյուր դասը 4 ակադեմիական ժամ է, մասնակիցներն էլ, խումբը՝ 12 մասնակցով: Աշխատաժամանակից դուրս է իրականացվում: Նրանք ուսանողներ չեն համարվում, այլ ունկնդիրներ են:

- Ովքե՞ր են դասավանդում, հրավիրյալ դասախոսներ կա՞ն:

- Դասախոսները մեծամասամբ մեր ակադեմիայի դասախոսներն են, հրավիրյալ դասախոս ունենք, բայց ոչ արտասահմանից: Մեր դասախոսներն ունեն բարձր վարկանիշ, նրանց մեջ կան նաեւ միջազգային փորձագետներ: Կախված մոդուլից, կախված ձեւաչափից՝ մենք պարբերաբար մեր դասախոսներին ուղարկում ենք դուրս՝ վերապատրաստումների: Միջազգայնացումն ակտիվացրել ենք, որ նաեւ միջազգային փորձի ուսումնասիրություն իրականացնենք, ու համագործակցում ենք մեծամասամբ այն բուհերի հետ, որոնք իրականացնում են պետական պաշտոնյաների համանման վերապատրաստման ծրագրեր:

- Հայաստանում այլ բուհ կա՞, որ պետական պաշտոնյաների վերապատրաստում է իրականացնում, թե՞ միայն Կառավարման ակադեմիան է:

- Մեր բուհը 1994-ին հենց այդ նպատակով է ստեղծվել, որպեսզի կառավարման ձեւաչափով նման աշխատանք իրականացնի: 2002-ից հետո նոր մագիստրատուրայի եւ ասպիրանտուրայի բաղադրիչն է ավելացել:

- Որպես բուհի ղեկավար, ինչպե՞ս եք վերաբերվում երեւույթին, որ քաղաքական գործիչների, բարձրաստիճան պաշտոնյաների հանրային խոսքը ողողված է հայհոյանքներով, սպառնալիքներով ու վիրավորական արտահայտություններով:

- Մեզ մոտ դասապրոցեսի ընթացքում չեմ նկատել, որ ունկնդիրները նման բառապաշար օգտագործեն: Մեզ մոտ նախկինում էլ, ներկայում էլ սովորողների կամ դասավանդողների շրջանում հնարավոր է, որ հանրային միջավայրում այլ բառապաշար են օգտագործում, բայց բուհի ներսում ակադեմիական միջավայր է ու պրոֆեսիոնալ մոտեցում թե՛ դասախոսների, թե՛ ունկնդիրների կողմից:

- Վերապատրաստման ծրագրի շրջանակներում պաշտոնյաների հանրային խոսքի, դրա սահմանների վերաբերյալ թեմաներին ե՞ւս անդրադառնում եք:

- Այդ նոր մոդուլի ծրագրի մեջ հանրային խոսքի մաս, որպես էդպիսին, չկա, այդ հարցով չենք զբաղվում:

- Ինչո՞վ է պայմանավորված, որ Նիկոլ Փաշինյանին ամեն անգամ բուհ գալիս դիմավորում եք դրսում: Ձեր բոլո՞ր ունկնդիրներին եք նման կերպ դիմավորում:

- Բա երկրի ղեկավարն է գալիս պետական կառույց, ինչպես նաեւ մեր Կառավարման ակադեմիան անմիջական ենթակայության տակ է, վարչապետի աշխատակազմի ՊՈԱԿ է համարվում, այլ կերպ ասած՝ իմ վերադասի վերադասն է գալիս, երկրի ղեկավարն է, բա ո՞նց եք կարծում:

Նյութերը՝
Արմինե
ՆԱՎՈՅԱՆԻ

Որտեղ են տեղավորել Արցախից վերադարձած վերջին հայերին

Հունվարի 23-ին հայտարարվեց, որ Արցախում մնացած վերջին հայերը տեղափոխվել են Հայաստան: Մասնավորապես, Հայաստան էին եկել 10 հայ եւ 1 ռուս: «Հրապարակ»-ին հայտնի դարձավ, որ Հայաստան եկած արցախցիներից մեկը՝ Գ. Աղայանը, տեղափոխվել էր հոգեբուժարան, սակայն հարազատները նրան տարել են տուն: Արցախցի Ֆրեդն այս պահին գտնվում է Աղվերանում՝ անտուն մարդկանց խնամքով զբաղվող հաստատությունում է:

«Հրապարակ»-ը բաց աղբյուրներից տեղեկացավ, որ արցախցիների մի մասին տեղավորելու հարցերով զբաղվել է Կոտայքի մարզպետարանը: Մասնավորապես, մեկ անձից կատարվող գնման ընթացակարգով պայմանագիր է կնքել Արզականում գտնվող հանգստի գոտու՝ «Հանգստի աշխարհ» ՍՊԸ-ի հետ: Ըստ այդ պայմանագրի, հանգստի գոտին ապահովել է 7 անձի կեցություն՝ արցախցիների եւ ուղեկցող անձնակազմի: Մասնավորապես, այստեղ տեղավորվել են Կամո Հայրապետյանը, Էրիկ Մինասյանը, Ռիտա Ղազարյանը, Վահան Հակոբյանը, Մերուժան Ստեփանյանը, Վլադիմիր Մայթարչյանը եւ Մերուժան Շամիրյանը: Հյուրանոցի սենյակները վարձակալել են հունվարի 23-ից մինչեւ մարտի 5-ը ժամանակահատվածի համար եւ վճարել 5 մլն 952 հազար դրամ: Նշված ժամանակահատվածում պայմանագիրը մեկ անգամ երկարաձգվել է:

ԾՆՈՂԻՆ ԴՊՐՈՑ ՉԵՆ ԹՈՂԵԼ, ՔԱՆԻ ՈՐ ՔՈՉԱՐՅԱՆԱԿԱՆ Է

Հրազդանի Հ. Թումանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցի համակարգող Գնել Հակոբյանի եւ ծնողների միջեւ միջադեպ է տեղի ունեցել: Մեզ պատմեցին, որ ծնողները մտել են դպրոց, որ երեխաներին տուն տանեն, համակարգող Գնել Հակոբյանը ծնողներին ասել է, թե չեն կարող մտնել դպրոց, քանի որ իրենք այլ կուսակցության են հարում՝ քոչարյանական են:

Տեղեկությունը ճշտելու համար զանգահարեցինք սույն դպրոցի ԺՊ **Սուսաննա Մեսրոպյանին**: Դո՞ւք եք հրահանգել համակարգող Գնել Հակոբյանին, որ թույլ չտա այլ կուսակցությունների համակիր ծնողներին մուտք գործել դպրոց:

«Իհարկե՝ ոչ, մենք այդ հարցն արդեն պարզել ենք, ծնողներին կանչել ենք դպրոց, իրենք էլ, համակարգողն էլ նստել, իրար հետ խոսել են, լրիվ սխալ բան է եղել: Նման արտահայտություն չի հնչել համակարգողի կողմից, ծնողն անձամբ չի լսել, չգիտեմ՝ ով ինչպես է բացատրել: Ես ծնողներին հրավիրել եմ դպրոց, համակարգողի հետ նստել խոսել են ու եկել են ընդհանուր եզրակացության, որ սխալ է եղել, ոչ մի նման բան չի եղել:

Բնականաբար, իմ կողմից նման բան չի կարող լինել, որովհետեւ դպրոցները չեն քաղաքականացվում, մենք դուրս ենք քաղաքականությունից»: Մեզ պատմեցին, որ Ձեր դպրոցի համակարգողը բնակվում է այն թաղամասում, որտեղ բնակվում է Սասուն Միքայելյանը: Դպրոցում նաեւ ավագանու ՔՊ-ական անդամ ունեք, ճի՞շտ է այդ տեղեկությունը: «Այո, դա ճիշտ է, ես չեմ կարող հերքել»: Ասում եք, որ Ձեր դպրոցը քաղաքականությունից դուրս է, սակայն նախորդ համայնքի ղեկավարի ընտրության նախընտրական քարոզարշավի ժամանակ հենց Ձեր դպրոցի նախկին տնօրենն էր դպրոցի աշխատակիցներին ու աշակերտներին ներգրավել քարոզարշավին: «Ես հենց այդ տարիներին փոխտնօրեն եմ եղել, այդքան շուկի մեջ ես եմ ընկել եւ չէի ուզի, որ նորից նույն պատմությունը կրկնվեր: Ես աշխատում եմ իմ կոլեկտիվին ընդհանրապես հեռու պահել նման քաղաքական խոսակցություններից, նույնիսկ դպրոցի ներսում չի հնչում որեւէ թիմի, խմբակցության մասին, կամ որեւէ անձի մասին նման խոսակցություն դպրոցում չկա: Ծնողների հետ կապված՝ եղել է թյուրիմացություն, ծնողները եկել են, զրուցել են, եւ՛ համակարգողը, եւ՛ ծնողները ներողություն են խնդրել, ամեն ինչ հարթվել է: Ծնողներին արգելվում է դպրոց մտնել, դա ցանկացած դպրոցում անում են, զանգը կտա, նոր ծնողը կմտնի ներս: Այդ ծնողը պարզապես վերագրել է նրան, որ ինքը Քոչարյանի կողքին նկարված է եղել, ու իրեն թվացել է, որ լարվածությունն այդտեղից է եկել: Ամեն մեկն ազատ է իր ընտրության մեջ: Ես ծնողների մոտ էլ եմ ասել եւ դպրոցում էլ ասում եմ, որ մենք իրավունք չունենք դպրոցում որեւէ քաղաքական թեմայով խոսել կամ ինչ-որ մեկին ստիպել, նման բան չկա դպրոցում»:

Տիկին Մեսրոպյան, ասացիք, որ այս ամենը թյուրիմացություն է եղել: Եթե թյուրիմացություն է եղել, վարչական գծով տնօրենն ինչո՞ւ է ներողություն խնդրել ծնողներից: «Չէ, չէ, ոչ թե ներողություն է խնդրել, ես սխալ արտահայտվեցի, կներեք, ոչ թե ներողություն է խնդրել, այլ իրենք եկան ընդհանուր հայտարարի, որ սխալ է եղել, ինչ-որ մեկն է հասցրել ծնողին, որովհետեւ ծնողն անձամբ ինքը չի լսել, ասացին՝ կներեք, թյուրիմացություն է եղել: Կարող եմ ասել, որ մեր դասվարներից մեկի տղաները հանդիպել են Քոչարյանին, դիմավորել են, հո մենք չե՞նք դնի՝ դասվարին ասենք, որ դպրոց մի արի»:

Հիշեցնենք, որ 2018 թվականի համայնքի ղեկավարի ընտրություններին ընդառաջ, Հրազդանի թիվ 5 հիմնական դպրոցի նախկին տնօրեն Տիգրան Բակլաչյանը Սեւակ Միքայելյանի նախընտրական քարոզարշավին ներգրավել էր դպրոցի աշխատակիցներին ու աշակերտներին:

Անի
ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՊԱՏՈՒՀԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ապրիլի 8-9-ը պաշտոնական այցով Հայաստանում էին գտնվում Ղազախստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Երմեկ Կոշերբաեւը եւ այդ երկրի տրանսպորտի նախարար Նուրլան Սաուրանբաեւը:

Այցը եւ նրանց հանդիպումները Փաշինյանի հետ՝ անմիջապես արդիական դարձրին հայկական երկաթգծի կառավարման վաճառքի թեման: Փաշինյանն այդ հարցի շուրջ ինչ է քննարկելու Ղազախստանի կառավարության ներկայացուցիչների հետ: Այս հարցին երեկ առավոտյան սպառիչ պատասխան են տվել Ղազախստանի ազգային տրանսպորտային լոգիստիկ հոլդինգը՝ «Թեմիր Ժոլի» ԲԲԸ-ն, եւ երկրի տրանսպորտի նախարարությունը, որոնք «Ինտերֆաքս-Ղազախստան»-ի միջոցով տարածել են՝ ղազախական կողմը ներկայում բանակցություններ չի վարում հայկական երկաթուղիների ռուսական կոնցեսիան ձեռք բերելու շուրջ: Մինչդեռ Փաշինյանը երեկ առավոտյան լրագրողների հետ ճեպազրույցում ասաց. «Հնարավոր է նաեւ այդ հարցին անդրադարձ լինի, բայց Ռուսաստանի թիկունքում որեւէ քննարկում տեղի չի ունենա»:

Ռուսաստանը դեռ օրեր առաջ ՌԴ տրանսպորտի նախարար Անդրեյ Նիկիտինի, այնուհետեւ՝ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովայի շուրթերով հայտարարել էր, որ բանակցություններ չի վարում Հայաստանի երկաթուղիների կառավարման կոնցեսիան Ղազախստանին փոխանցելու շուրջ:

«Արդեն տարիներ շարունակ «Հարավկովկասյան երկաթուղին» պատասխանատվությամբ կատարում է այդ պայմանագրի դրույթները, իսկ ռուսական ներդրումները Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքում ավելի քան 30 միլիարդ ռուբլի են կազմում»,- Փաշինյանի վերջին մոսկովյան այցին ընդառաջ, ասել էր Զախարովան: Եվ կրկին հակասություն Փաշինյանի խոսքերի հետ, որն ասել էր, թե բանակցում է Ռուսաստանի հետ՝ երկաթուղու կառավարումն այլ երկրի, օրինակ՝ Ղազախստանին, Արաբական Միացյալ Էմիրություններին կամ Կատարին փոխանցելու վերաբերյալ: Մարտի 26-ին նա նույնիսկ հույս էր հայտնել, որ Ռուսաստանն ու Հայաստանը համաձայնության կգան կառավարումը ղազախ գործընկերներին փոխանցելու շուրջ:

Հիմա կա՞ն բանակցություններ ղազախների հետ, թե՞ ոչ:

Էներգատրանսպորտային ենթակառուցվածքների փորձագետ **Վահե Դավթյանը** կարծում է, որ եթե Հայաստանում հստակ հարց է բարձրացնում, որ դիտարկվում է ղազախական կապիտալի հնարավոր ներգրավումը ՀՀ երկաթուղային համակարգ, ապա սա ենթադրում է, որ Ղազախստանի հետ կա նախնական որոշակի համաձայնություն: «Ուղղակի ղազախական կողմը հանրային դաշտում որեւէ կերպ չի արձագանքում, որովհետեւ սա ուղիղ հակասության մեջ է մտնում Հարավային Կովկասում Ռուսաստանի շահերի հետ: Ղազախստանն այս պահին փորձելու է դեռեւս շրջանցել սուր անկյունները, դրա համար հայտարարություն չի արվում, բայց ես առավել քան վստահ եմ, որ Ղազախստանի հետ բանակցային գործընթացը գնում է»: Ըստ նրա, միայն Թուրքիայի եւ Ադրբեջանի համար է, որ ռուսական կապիտալի առկայությունը խոչընդոտ է Միջին միջանցքը լիարժեքորեն Հարավային Կովկասով իրականացնելու համար:

Վահե Դավթյանը հարց է բարձրացնում՝ ինչո՞ւ է Փաշինյանը Ղազախստանի մասին խոսում, այլ ոչ, օրինակ, երկաթուղային առումով ավելի հետաքրքիր երկրների, որոնք ունեն ավելի զարգացած կառավարման համակարգեր: Օրինակ, Չինաստանի կամ Հնդկաստանի: 2008 թվականին, երբ կոնցեսիայի տենդերը հայտարարվեց, «Ռուսական երկաթուղիների» հետ մեկտեղ մրցույթին մասնակցում էր նաեւ Հնդկաստանը, բայց ընթացքում դուրս եկավ: «Այստեղ հարցի մի քանի չափում կա: Նախ՝ ղազախական «Թեմիր Ժոլի» ընկերությունը, որը նրանց երկաթուղային օպերատորն է, պարզապես բիզնես սուբյեկտ չէ, այլ ներդրումային հոլդինգ է, որն իրականացնում է բազմաթիվ ներդրումային ծրագրեր ոչ միայն Ղազախստանի տարածքում, այլեւ՝ Ադրբեջանում, ինչպես նաեւ՝ Թուրքիայում»,- ասում է փորձագետը:

Նա չի բացառում, որ այդ ընկերության մեջ նաեւ թուրքական կապիտալ լինի: «Թուրքիան այսօր ղազախական տնտեսության մեջ երկրորդ ներդրողն է, եւ ներդրումներն իրականացվում են եւ տրանսպորտային, եւ էներգետիկ ենթակառուցվածքներում: Փաստացի, Չինաստանից հետո այն երկրորդ խաղացողն է Ղազախստանում: Իր հերթին Ղազախստանը Թուրքիայում իրականացված օտարերկրյա ուղիղ ներդրումների կառուցվածքի մեջ երրորդն է Նիդեռլանդներից եւ Մոնակոյից հետո: Քանի որ սա բավականին զգայուն հարց է, բնականաբար, թուրքական կապիտալի ներգրավվածության մասին ուղիղ խոսք չի կարող լինել Հայաստանում այս պահի դրությամբ, բայց ղազախական պատուհանը կարող է օգտագործվել հայթուրքական ենթակառուցվածքային փոխգործակցության համար»:

Աշխարհաքաղաքական տեսանկյունից փորձագետը շեշտում է Միջին միջանցքի նախագծի գործոնը, որին Հայաստանին ամեն կերպ փորձում են ինտեգրել: «Սա նախագիծ է, որը պետք է կապի Կենտրոնական Ասիան Եվրոպայի հետ՝ Վրաստանի ու Թուրքիայի ճանապարհով: Այսօր Հայաստանը դիտվում է որպես Միջին միջանցքի դիվերսիֆիկացիոն ուղի, եւ այստեղից էլ Թրիփփը կամ, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքը, որը եւ Ալիեւը, եւ թուրքական կողմն է հայտարարում, որ Միջին միջանցքի ճյուղերից մեկը պետք է լինի: Այսինքն՝ սա թուրքական աշխարհին ինտեգրման ուղի է եւ սա ակնհայտ է, ու պարզ է, որ այն տրանսպորտային կոնֆիգուրացիան, որը ձեւավորվում է Հարավային Կովկասում, բացառում է ռուսական կապիտալի առկայությունը Հայաստանի երկաթուղային համակարգում»,- «Հրապարակի» հետ զրույցում նշեց Վահե Դավթյանը:

ՀԳ. *Փետրվարի վերջին ՀՀ ՏԿԵ նախարարությունը հայտնում էր, որ ռուսական կողմի հետ քննարկվել են Գյումրի-Ախուրիկ-Թուրքիայի սահման եւ Երասխ-Նախիջեւան երկաթուղային ենթակառուցվածքների վերականգնման եւ շինարարության հարցերը, ինչը հաստատել էր նաեւ ՌԴ փոխվարչապետ Օվերչուկը: Եվ հանկարծ, երբ որոշումն արդեն ընդունված էր, մի երկու օրից Հայաստանը, փաստորեն, ասում է ռուսներին՝ դե, տղերք, էլ պետք չէ, դուք գնացեք: Հասկանալի է, որ սա պրոթուրքական նախագիծ է: Թուրքիան է տարածաշրջանի այն միակ երկիրը, որի համար ձեռնտու չէ հայկական երկաթգծի կառավարումը ռուսների կողմից, իսկ որ դա այդպես է, անուղղակիորեն երեւում է այն վճռականությունից, որը տնտեսական ծանր վիճակում գտնվող Թուրքիան սկսել է ու համառորեն շարունակում է 3 մլրդ դոլար արժողության Կարս-Նախիջեւան երկաթգծի կառուցումը, որը շրջանցում է Հայաստանը: Ադրբեջան գնալու համար այսօր նրանք Կարսից Գյումրի են մտնում, Երասխով դուրս գան Նախիջեւան, մտնեն Մեղրի, Մեղրիից էլ՝ Ադրբեջան: Իսկ նոր երկաթուղին կառուցելով, նրանք Կարսից անմիջապես մտնում են Նախիջեւան, Նախիջեւանից էլ Թրիփփով՝ Ադրբեջանի մնացած հատված:*

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan
@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԵՄ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵՍԻՋԸ ՏՎԵՑ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

Սահմանադրական մեծամասնության մասին ճամարտակող իշխանականները շարունակում են մերկապարանոց հայտարարություններ անել քաղաքական հակառակորդների մասին: Կառավարության երեկվա նիստից հետո՝ ճեպազրույցի ժամանակ պարզաբանելով, թե այդ ինչպես է Սամվել Կարապետյանը բոմժ դառնալու, արդյոք ինքը սպառնո՞ւմ է ունեզրկել գործարարին, Փաշինյանը «կռուտիտից» բացի անապացույց, օդի մեջ հայտարարությամբ է հանդես եկել: Հավաստիացրել է, որ իր այդ խոսքերը սպառնալիք չեն: Ինքը պարզապես վախենում է Սամվել Կարապետյանի համար, որը չի կարողանա, իր խոսքով, «կատարել Հայաստանից դուրս գտնվող որոշ շրջանակների նկատմամբ ստանձնած պարտավորությունները եւ կունեզրկվի»:

Հիշեցնենք, որ օրեր առաջ էր նա հայտարարել. «Կալուգացի Սամվելն իր խոսնակների միջոցով ինձ հորդորում է չվախենալ: Ախր ո՞նց չվախենամ, վախենում եմ՝ մինչեւ տարվա վերջ միլիարդատերից դառնաս բոմժ»:

Հայաստանից դուրս գտնվող այդ ի՞նչ շրջանակների մոտ եւ ինչպիսի՞ պարտավորություն է ստանձնել Սամվել Կարապետյանը, եթե, իհարկե, ստանձնել է. երեկ հարցրինք Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ, նախընտրական ցուցակի 4-րդ հորիզոնականում տեղ զբաղեցնող **Դավիթ Ղազինյանին**:

Բնական է, որ ակնարկը Ռուսաստանին է ուղղված, եւ Փաշինյանը տքնում է ցույց տալ, որ Կարապետյանը Պուտինի մարդն է, սակայն Ղազինյանը ծիծաղելի է համարում Փաշինյանի զուր ջանքերը. «Բացարձակ պարտավորություն չունի Սամվել Կարապետյանը, որից էլ փոքրիկ խմբակի ղեկավարը, ըստ էության, նեղսրտում է: Սամվել Կարապետյանը միայն պարտավորություն ունի իր ժողովրդի, իր ազգի, պետության նկատմամբ, որն էլ փորձում է իրականացնել»:

Ղազինյանը Փաշինյանի հայտարարությունն ընկալում է իբրեւ մեսիջ ներպետական մարմիններին. «Նկատի ունեմ՝ նա գուցե մեսիջ է տալիս ՊԵԿ-ին, իրավապահներին՝ գործելու իր հայտարարության ուղղությամբ, բայց պետք է հիասթափեցնեմ, որ դա էլ իրենց չի օգնելու, Սամվել Կարապետյանն արդեն ցույց է տվել, որ իր համար ֆինանսը շատ փոքր նշանակություն ունի, շատ փոքր, ես հավաստացնում եմ ձեզ»:

Երեկվա ճեպազրույցի ընթացքում Փաշինյանը նաեւ անուղղակի պատասխանեց Կարապետյանի թիմին, որտեղից վստահաբար պնդում են, որ հաջորդ վարչապետը Կարապետյանն է լինելու, ակնարկեց, որ ինքը վերընտրվելու է հունիսի 7-ի ընտրություններում:

Արձագանքելով Պուտինի հետ վերջին հանդիպման եւ կոշտ զրույցից հետո վերլուծաբանների գնահատականներին, որ այդ հանդիպումը կարող է վերջինը լինել, Փաշինյանը շտապեց ասել, թե հաջորդ հանդիպման մասին արդեն պայմանավորվածություն ունեն, եւ այն նախատեսվում է հունիսի կեսերին: Նա կոնկրետ օր չհայտնեց, բայց հանդիպման ժամկետը, որ նշեց Նիկոլ Փաշինյանը, հաջորդում է հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին: «Ես կարծում եմ, որ այդ հայտարարությամբ ինքն ընդամենը փորձ արեց իր փոքրիկ ընտրազանգվածը պահել, եւ ամենակարեւորը՝ իր թիմին, իր թիմում էլ են հասկացել, որ վերընտրվելու շանսեր չունի եւ վախենում է թիմը քանդվելուց, որն արդեն իսկ ճաքեր է տվել»:

Ի դեպ, Ղազինյանն իրենց հասցեին քննադատություններին անդրադառնալով ասաց, որ նախօրեին գաղտնի համագումար չեն արել, ընդամենը այն չի լուսաբանվել. «Ո՞նց եք պատկերացնում՝ 150 հոգի քաղաքի կենտրոնում՝ «Ալեքսանդր» հյուրանոցում գաղտնի հավաք կարո՞ղ էր անել»: Տեղեկացրեց, որ օրակարգի սեղմ լինելու պատճառով լրատվամիջոցներին չեն հրավիրել, քանի որ ընդամենը ցուցակի 36 հոգուն են հաստատել: Հավելեց նաեւ, որ հրապարակվածը միայն «Ուժեղ Հայաստան» կուսակցության ցուցակն Է՝ առանց դաշնակից ուժերի, իսկ ամբողջական ցուցակը կհրապարակեն ապրիլի 11-ին:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@
hraparak.am

ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆՅՈՒ ՁԱՅՆԸ ՎՃՌՈՐՈՇ Է ԼԻՆԵԼՈՒ

*«Հրապարակի» զրուցակիցը ՀՀ ԱԺ պատգամավոր, Այլընտրանքային նախագծեր խմբի անդամ **Էլինար Վարդանյանն** է:*

Արա ԱԼՈՅԱՆ

- Նախընտրական շրջափուլում նժարին հերթական անգամ դրված է հայ ժողովրդի ճակատագիրը՝ թերեւս ամենավճռորոշ կերպով: ՔՊ-ն արդեն սկսել է «հոգեբանական գրոհը», որն ուղեկցվում է աննախադեպ բռնաճնշումներով, պատերազմի վախ ներարկելով, դպրոցականների ձերբակալություններով, կաթողիկոսին հեռացնելու խայտառակ դրույթ ներառող նախընտրական ծրագրով եւ այլն: Կկարողանամ ընդդիմադիր դաշտը հակազդել քաղաքական այս «ահաբեկչությանը»:

- Այո, առաջիկա ընտրություններում իսկապես որոշվում է հայ ժողովրդի ճակատագիրը: Սա պարզապես սովորական, հերթական ընտրություն չէ: Սա քաղաքակրթական ընտրություն է: Իշխանությունները, անկասկած, առաջիկայում առավել ուժգնորեն են աշխատեցնելու բռնաճնշումների թափանիվը: Կլինեն նոր ձերբակալություններ, նոր կալանավորումներ: Վստահաբար, շարունակելու են մեզ սպառնալ պատերազմով: Ընդդիմադիր դաշտն այս ամենը շատ լավ գիտակցում է, եւ հենց այս հարցերի շուրջ է, որ ընդդիմադիրները պետք է ձեւակերպեն միասնական օրակարգ: Այն է՝ անկեղծ աշխատանք մեր քաղաքացիների հետ, միասնական պայքար յուրաքանչյուր ձերբակալվածի եւ կալանավորվածի համար: Մենք պետք է մեր քաղաքացիներին միասնաբար բացատրենք, որ սա պետության եւ պետականության լինելիության ընտրություն է: Սա Հայաստանի, որպես պետության, հետագա գոյության ընտրությունն է: Եվ հենց սա է, որ ընդդիմադիր ուժերը պետք է հասցնեն հասարակությանը: Մենք պետք է մեր քաղաքացիների համար հստակ հարց ձեւակերպենք՝ արդյո՞ք համաձայն են այս իշխանությունների հետ շնորհակալություն հայտնել Ալիեւին: Արդյո՞ք հաշտ են Եկեղեցու դեմ ասպատակության հետ, Բաքվի բանտերում մեր հայրենակիցների պատանդառության հետ, հաշտ են երկրի ներսում աննախադեպ բռնաճնշումների հետ: Պետք է մեր հայրենակիցներին պարզ բացատրենք, որ պատերազմի սպառնալիքը զուտ այս իշխանությունների նախընտրական սպառնալիքներն են, եւ ներկայացնենք քայլերը, որոնցով Հայաստանի նոր իշխանությունները ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն վիճակը կվերածեն երաշխավորված խաղաղության:

- Երեւանը վաղուց մայրաքաղաք-պետության նշանակություն ունի՝ թե՛ իր բնակչությամբ, թե՛ իր ենթակառուցվածքներով, թե՛ զարգացման (իրականում՝ ՀՀ մարզերի անհամաչափ զարգացման պատճառով) եւ այլ գործոններով: Բայց Երեւանում էլ խնդիրներն ահռելի են, ինչպես տեղին նկատել եք՝ բարբարոսական շինթույլտվություններից. այլանդակ շենքերից մինչեւ ճանապարհային խցանումներ եւ այլն: Պնդում եք՝ դրանց պատճառով երեւանցին կմերժի գործող վարչախմբին:

- Երեւանում մեկը մյուսի հետեւից հայտնվող բարձրահարկերի ստվերում մարզերը շարունակում են մնալ անհամաչափ զարգացման ճիրաններում: Եվ դա լուրջ խնդիր է: Գրեթե բոլոր մարզերում առկա է զբաղվածության՝ տարիներով չլուծվող խնդիր: Հեռավոր բնակավայրերը կամաց-կամաց դատարկվում են: Իշխանություններին թվում է, թե մեկ-երկու մանկապարտեզ վերանորոգելով՝ համաչափ զարգացման խնդիր են լուծում: Մինչդեռ այստեղ պետք է համակարգային լուծում: Բայց զուգահեռ իրականությունում Երեւանն է, որտեղ կենտրոնացած է ամեն ինչ՝ շինարարություն, աշխատաշուկա, ծառայությունների գրեթե 80 տոկոսը: Երեւանը դարձրել են հրեշ քաղաք՝ առանց հոգի, առանց մշակույթ, անիմաստ քարերի տարածք: Երեւանցին շնչում է կեղտոտ, քաղցկեղածին օդ, ժամերով մնում է խցանումներում, պայքարում է խրամատներ հիշեցնող փոսերի դեմ, ցանկը կարելի է շատ երկար շարունակել: Սրանք են նաեւ այն պատճառները, որոնց համար երեւանցին կմերժի այս իշխանությանը: Հանրային տրամադրություններն այդ մասին են խոսում:

- Երեւանի ավագանու նախորդ ընտրությունները, ի դեպ, որոշակի լույս են սփռում Ձեր ասածի վրա. գործող իշխանությունները մի կերպ կարողացան վերարտադրվել հենց Ձեր թվարկած խնդիրների եւ բացթողումների պատճառով: Ըստ Ձեզ, այս անգամ երեւանցու ձայնն ավելի ազդեցիկ ու վճռակա՞ն կլինի եւ որքանո՞վ կազդի ԱԺ ընտրությունների ելքի վրա:

- Երեւանի ավագանու վերջին ընտրությունները իսկապես ցուցիչ էին: Երեւանցիները, որպես քաղաքի կառավարողներ, այլեւս չէին տեսնում այս իշխանությանը, եւ դա էր պատճառը, որ վերջիններիս դժվարությամբ հաջողվեց վերարտադրվել: Մարդիկ հոգնել են մշտական խոստումներից եւ չարված աշխատանքից: ԱԺ ընտրություններում երեւանցու ձայնն իսկապես վճռական է լինելու: Սոցիոլոգիական հարցումները դա են վկայում: Այդ մասին է խոսում նաեւ իշխանության նախընտրական զբոսանքներին երեւանցիների արձագանքը: Մի կողմ թողնենք բերված մասսովկան: Իրական անցորդների արձագանքն այլ է:

- Ընտրություններին ընդառաջ, Փաշինյանը փորձեց հնարք կիրառել՝ Մոսկվա՝ Պուտինի հետ բանակցություններին մեկնելուց առաջ հայտարարելով, թե Ռուսաստանը մեր բարեկամն է: Իսկ այնտեղ եղավ այն, ինչ եղավ: ՌԴ նախագահը հստակ սահմանեց Կրեմլի «կարմիր գծերը», ի թիվս այլնի, հասկացրեց, որ ՀՀ գործող իշխանախումբը պարտավոր է նախընտրական գործընթացներում ապահովել ռուսամետ քաղաքական ուժերի անխոչընդոտ մասնակցությունը: Ակնհայտ է՝ խոսքը Սամվել Կարապետյանի եւ Ռոբերտ Քոչարյանի մասին:

- Մոսկվա այցից կարող ենք մի շարք արձանագրումներ անել՝ նախ Մոսկվան ակնկալում է կոնկրետ ընտրություն՝ կամ ԵԱՏՄ, կամ ԵՄ, եւ այդ ընտրությունը նաեւ էներգետիկ արժեք է ունենալու: Արձանագրվեց, որ Հայաստանում այսօր կան մարդիկ, որ քաղաքական հայացքների համար գտնվում են բանտում, ինչպես նաեւ՝ Արցախի հարցով փաստացի նշվեց, որ այն շարունակում է մնալ զգայուն հարց: Ակնարկ արվեց նաեւ ընտրություններին քաղաքական ուժերի անխոչընդոտ մասնակցության մասին: Բոլորը շատ լավ հասկանում են, որ խոսքը մոլդովական սցենարի բացառման մասին է, ինչին անթաքույց ձգտում է այս իշխանությունը: Բայց եկեք ֆիքսենք մի կարեւոր հանգամանք՝ հունիսի 7-ի ընտրությունները բացառապես ներհայաստանյան ընտրություններ են: Հայաստանի ճակատագիրը չի որոշում ո՛չ Մոսկվան եւ ո՛չ էլ Բրյուսելը: Վերեւներում (ինչպես ընդունված է ասել), այլ երկրներում չեն որոշելու մեր երկրի ապագան, դա մեր ընտրությունն է:

- Երեւանից, ինչպես միշտ, «առաջին ջութակի» դերն իր վրա վերցրեց ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը: Նա հայտարարեց, թե ՌԴ նախագահի «դաբրոն» այլեւս չի անցնում Հայաստանում: Սպառնաց նաեւ ՀԱՊԿ-ից եւ ԵԱՏՄ-ից դուրս գալով: Քաղաքական ու իշխանական այս մանկամտությունն ու անլրջությունը ե՞րբ են ավարտվելու: Չէ՞ որ Կրեմլի վերջին ուղերձները շատ ավելի խորն են ու լուրջ:

- Անլրջությունն այս իշխանության այցեքարտն է: Հետեւաբար, մեկնաբանել իրենց հայտարարությունները՝ անշնորհակալ գործ է: Հատկապես որ մի քանի օր առաջվա «բարեկամից» այլեւս «դաբրոյի» կարիք չունեն: Ավելին, նրանք մեկ քայլ էլ առաջ գնացին եւ անկեղծություն ունեցան ու հայտարարեցին, որ Հայաստանի խաղաղության երաշխավորն Ադրբեջանն է: Հասկանում եք, նրանց պատկերացումներում խաղաղության երաշխավորն այլեւս մենք չենք, մեր բանակը չէ, այլ Ադրբեջանն է: Ինչ վերաբերում է Կրեմլի ուղերձներին, ապա առանց դիվանագիտական նրբությունների, մեր իշխանություններին փաստացի դրեցին ընտրության առաջ՝ Եվրոպա՞, թե՞ Եվրասիական միություն՝ իր բոլոր տնտեսական հետեւանքներով: Անդրադառնալով Հայաստանի տնտեսական կապերին, անվտանգության խնդիրներին, հիշատակելով Լեռնային Ղարաբաղը, խոսելով Եվրամիության հետ հարաբերություններից, Հայաստանին փոխանցվեց հստակ ուղերձ այն մասին, թե Հայաստանն ինչ է ունեցել, ինչ է կորցրել եւ ինչ կարող է կորցնել: Սա հասկանալու համար մեր իշխանությունների լրջությունը կամ, եթե կուզեք՝ անլրջությունը բավարար չէ:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԾԱՆՐ Է

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*«Հրապարակի» զրուցակիցը ռազմական փորձագետ **Դավիթ Ջամալյանն** է:*

- Նիկոլ Փաշինյանը սպառնում է, որ բարերար Սամվել Կարապետյանը կարող է բոմժ դառնալ, իսկ ՔՊական մի պատգամավոր էլ ասում է, որ անգամ կարող է այնպես անել, որ Սամվել անունով բոլոր անձանց արգելվի ընտրություններին մասնակցել: Ըստ Ձեզ՝ այս հայտարարություններն ինչի՞ համար են արվում: Արդյո՞ք իրավական պետության վարչապետին եւ պատգամավորներին հարիր է նման բառապաշարով խոսելը:

- Այս մարդիկ իրականության զգացումը կորցրել են, իսկ իրականության զգացումը կորցնելը քաղաքական վախճանի ամենաակնառու նշաններից է: Ի դեպ, եթե հետադարձ հայացք նետենք Հայաստանի նորանկախ պատմությանը, ապա էլի են եղել նման իշխանություններ, երբ իշխանավորները կորցրել են իրականության զգացումը, բայց հետո շատ են զղջացել դրա համար, քանի որ թանկ են վճարել: Իրականությունից կտրված իշխանավորների վերջը լավ չէ: Նման մարդիկ սովորաբար լկտիանում են, սակայն բումերանգի օրենքով ամեն ինչ վերադառնում է վերջում իրենց կողմը: Իշխանությունների վիճակը ողբերգական է: Նիկոլ Փաշինյանը հրաշալի գիտակցում է, որ ունի ռեյտինգի խնդիր: Նա իր բոլոր այլանդակություններով, ընտրակեղծարարություններով, վարչական ռեսուրսների կիրառմամբ եւ այլն, ունի ընդամենը 40 տոկոս ձայն: Այս մարդիկ հասկանում են, որ չկա վերարտադրման ռեսուրս: Ինչպես Խաչիկ Մանուկյանն է ասում՝ այս գոյանքները չունեն բարոյականության նշույլ: Այս բոլոր հայտարարությունները նրանց տագնապների եւ վախերի մասին են: Նրանք գիտեն, որ ոչինչ իրենց մոտ չի ստացվելու, դրա համար փորձում են նման հայտարարություններով գոնե ազդեցություն ունենալ իրենց էլեկտորատի վրա, քանզի անգամ Նիկոլի էլեկտորատն է հրաժարվում Նիկոլից: Ես իմ առօրյա շփումներից եկել եմ այն եզրակացության, որ, այո, այս անգամ բոլոր հնարավոր եւ անհնար կեղծիքներով այս մարդիկ կարողանալու են հաղթահարել հազիվ 40 տոկոս քվե: Նիկոլ Փաշինյանը գիտակցում է, որ իր վիճակը ծայրահեղ ծանր է: Բարոյապես տհասի հուսահատությունն ունենում է նման էկզոտիկ դրսեւորումներ: Ընդամենը մի հորդոր ունեմ մեր ընդդիմությանը. այս իշխանությունն ամեն ինչի ընդունակ է, կարող է գնալ որոշ արգելքների, պետք է նրանք այդ պարագայում համախմբվեն առավել, քան երբեւէ: Ես լսել եմ, որ զինվորական շքերթ են իշխանությունները ցանկանում կազմակերպել, չեմ բացառում, որ այդ քայլով փորձում են Ադրբեջանին սադրել: Որպեսզի Ադրբեջանը փոքր ծավալի ռազմական գործողություններ սկսի սահմանին, դրա համար պետք է առիթ: Եթե նման բան եղավ, ապա ռազմական դրություն են մտցնելու եւ ընտրությունները չեղարկեն. դա եւս տարբերակ է իշխանությունների համար: Ընդդիմությունը պետք է պատրաստ լինի այս բոլոր սցենարներին:

- Իսկ ի՞նչ եղավ խաղաղության կոնցեպտի հետ:

- Խաղաղության կոնցեպտ չկա, ահաբեկելով փորձում են ժողովրդից ձայներ գողանալ: Բայց խաղաղության թեզը չի բերում Նիկոլի վերարտադրությանը, այստեղ Նիկոլի տերերի համար խնդիր է առաջանում: Եթե խաղաղության թեզը Նիկոլի վերարտադրմանը չի նպաստում, այդ պարագայում հակառակը կփորձեն անել, սակայն հասարակությունը որեւէ պարագայում չպետք է ընկճվի, չպետք է վախենա:

ԵՍՏԵ

ՀԱՎԵԼՅԱԼ 1 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԸ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ Է ՎՃԱՐԵԼՈՒ, ԹԵ՞ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ



Եթե իշխանության ներկայացուցիչները գոնե մեկ-մեկ կարդան Հայաստանի սահմանադրությունը, կհամոզվեն, որ իրենց կողմից իրականացվող արտաքին քաղաքականությունը եւ դրա հիմնավորումները ոչ միայն հակատրամաբանական են, այլեւ՝ նույնիսկ հակասահմանադրական: Կարդացեք Սահմանադրության 86-րդ հոդվածը, որը սահմանում է պետության քաղաքականության հիմնական նպատակները, այսինքն՝ սահմանում է, թե ինչի համար գոյություն ունի պետությունն ընդհանրապես:

Սահմանադրության այդ հոդվածում ասվում է. «Տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են. 1) գործարար միջավայրի բարելավումը եւ ձեռնարկատիրության խթանումը, 2) բնակչության զբաղվածության խթանումը եւ աշխատանքի պայմանների բարելավումը»: Այս հոդվածում էլի կետեր կան, բայց տնտեսությանը վերաբերողը սրանք են, եւ դրանք համարվում են առաջնային նպատակ: Իսկ հաջորդ՝ 87-րդ հոդվածում, որը վերնագրված է՝ «Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը», ասվում է. «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների եւ հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները»: Սահմանադրության 156 հոդվածը վերաբերում է կառավարության կողմից իր իրականացրած ծրագրերի եւ դրանց արդյունքների վերաբերյալ Ազգային ժողովին զեկույց ներկայացնելուն: Ինչ պետք է զեկուցի կառավարությունն ԱԺ-ին՝ 86-րդ հոդվածի պահանջների կատարման մասով, իրենց իրականացրած արտաքին քաղաքականության արդյունքում՝ գործարար միջավայրն են բարելավել, ձեռնարկատիրությունն են դրանով խրախուսել, թե՞ բնակչության զբաղվածությանը խթանել:

Իշխանությունն ասում է, որ իրեն հետաքրքրում են ոչ թե առանձին վերցրած մեկ կամ մի քանի ընկերությունների տնտեսական, բիզնես շահերը, այլ երկրի ինքնիշխանությունը, որ իրենք չեն կարող թույլ տալ, որ Ռուսաստանն օգտագործի իր տնտեսական լծակները եւ Հայաստանին պարտադրի իր շահերին դեմ քայլեր անել: Իսկ թե որն է այդ շահը, ոչ մեկը մինչեւ այսօր չի ձեւակերպել: Իշխանությունը Հայաստանի ինքնիշխանությունը եւ երկրի տնտեսական շահը հակադրում է իրար, այն դեպքում, երբ անկախությունը հենց երկրի տնտեսական շահերը պաշտպանելու կարողությունն է: Արդեն տեղեկություններ կան, որ Ռուսաստանը սկսել է պատժամիջոցներ իրականացնել Հայաստանի տարբեր ընկերությունների նկատմամբ, մասնավորապես՝ ալկոհոլային խմիչքներ արտադրող Պռոշյանի կոնյակի գործարանը զրկվել է Ռուսաստան ապրանքներ արտահանելու արտոնագրից: Դժվար չէ պատկերացնել, որ այդ նույն խնդրի առաջ կանգնելու են իրենց արտադրանքը Ռուսաստան արտահանող հազարավոր այլ ընկերություններ, որոնց տերերի մի մասը վարակված է հակառուսականությամբ, նրանք սիրում են փող աշխատել հետամնաց եւ վայրենի Ռուսաստանում, բայց այդ փողը ծախսել առաջադեմ եւ զարգացած Եվրոպայում: Ռուսաստանը հասկացնում է, որ եթե դուք այդքան առաջադեմ եւ լուսավորյալ եք, եթե պաշտպանում եք ձեր իշխանության եվրահինտեգրման քաղաքականությանը, ապա պետք է հրաժեշտ տաք ռուսական շուկային եւ ձեր արտադրանքը վաճառեք եվրոպական եւ ամերիկյան շուկաներում: Պատկերացնում եք՝ Պռոշյանի կոնյակը եվրոպական կամ ամերիկյան որեւէ շուկայում վաճառվելիս, չեք պատկերացնում, չէ՞: Համեմատության համար ասենք, որ նույնիսկ Երեւանի կոնյակի գործարանի արտադրած կոնյակն ԱՄՆ-ում վաճառվում է ավելի էժան, քան՝ Երեւանում, Հայաստանում: Այո, դուք ճիշտ լսեցիք, ԱՄՆ-ում «Ախթամարը» կամ այլ կոնյակներ ավելի էժան են, ոչ թե Ռուսաստանի, այլ Երեւանի գներից, որովհետեւ չեն կարողանում մրցակցել համաշխարհային բրենդների հետ:

Արդյոք կառավարությունը եւ նրա առանձին ստորաբաժանումներ, հանդիսանալով պետական կառավարման մարմին, առաջնորդվո՞ւմ են Սահմանադրության նշված պահանջներով, արդյոք ԵԱՏՄ-ից դուրս գալու շանտաժը, Ռուսաստանի հետ տնտեսական եւ այլ կապերի խզումը նպաստո՞ւմ են այս նպատակների իրականացմանը: Եթե Ռուսաստանը սպառնում է փակել իր շուկան եւ թույլ չտալ հայկական ապրանքների արտահանումը Ռուսաստան, դա գործարար միջավայրի բարելավո՞ւմ է, թե՞ ձեռնարկատիրության խրախուսում, եթե տասնյակ եւ հարյուր հազարավոր հայ ֆերմերներ զրկվելու են իրենց արտադրանքն արտահանելու հնարավորությունից, իսկ վերամշակող ձեռնարկությունները մնալու են առանց պատվերի, արդյո՞ք դա բնակչության զբաղվածության խթանում է: Եթե գազի գինը կարող է 177,5 դոլարից դառնալ 600 դոլար, ինչո՞վ է դա նպաստելու սոցիալական վիճակի բարելավմանը: Հայաստանում հարյուրավոր եւ հազարավոր ջերմատնային տնտեսություններ կան, որոնք կառուցվել են էժան գազի եւ իրենց ապրանքը Ռուսաստանում իրացնելու հաշվարկով: Հայաստանը տարեկան Ռուսաստանից ներմուծում է 2 միլիարդ եւ ավելի խորանարդ գազ, ամենապարզ հաշվարկը ցույց է տալիս, որ գնի նման կտրուկ թանկացումը Հայաստանի տնտեսության վրա կարժենա հավելյալ 1 միլիարդ դոլարի ծախս, դա Նիկոլ Փաշինյա՞ն է վճարելու, թե՞ Ալեն Սիմոնյանը:

Հակադարձում են, որ եթե Ռուսաստանը մեզ որոշի պատժել, ԵՄ-ն կօգնի: Ուզում եմ մեջբերել ԵՄ էներգետիկայի հանձնակատար Դեն Յորգենսենին, որը երկու օր առաջ ԵՄ քաղաքացիներին կոչ է արել՝ խնայել վառելիքը. աշխատել տնից, վարել ժամում 10 կիլոմետր ավելի դանդաղ եւ օգտագործել գնացքներ՝ ինքնաթիռների փոխարեն: «Նույնիսկ եթե վաղը խաղաղություն գա, մենք շուտով չենք վերադառնա նորմալ կյանքի»,- ասել է նա:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԽԱՌՆ ԵՆՔ, ԽԱՌԸ...

«Խմբակ» բառը ՔՊ-ի ամենաճիշտ բնորոշումը չէ, բայց այնպես է կպել Նիկոլին ու իր ուսապարկերին, որ սկսել ենք մոռանալ «խունտա», «ավազակախումբ», «թափառախումբ», «ազգակործան պատուհաս», «կապիտուլյանտ», «հողատու», «դավաճան» եւ անգամ «թուրք» բնութագրիչները: «Խմբակն» էլ քիչ էր՝ հիմա արդեն շրջանառում են «փոքրիկ խմբակ»-ը, որպես ՔՊ-ի սինոնիմ (հոմանիշ): «Խմբակ» կամ «փոքրիկ խմբակ» արտահայտությունների հեղինակային իրավունքն անվիճելիորեն պատկանում է Սամվել Կարապետյանին, որի շռնդալից մուտքը հայաստանյան քաղաքականություն որակապես փոխեց թե՛ քաղաքական դաշտը, թե՛ այդ դաշտի իշխանական հատվածի ինքնագնահատականը: Այսուհանդերձ, սա պետք է ընդունենք, Սամվել Կարապետյանը նոր մարդ էր հայաստանյան իրականության մեջ, եւ այնքան էլ ամբողջական չէին նրա պատկերացումները, իր բնութագրմամբ՝ փոքրիկ խմբակի մասին: Գիտե՞ր, արդյոք, Սամվել Կարապետյանը, որ այդ փոքրիկ խմբակը Հայաստանում ունի իրենից ավելի մեծ հովանավորներ: Ես ամենեւին էլ Ադրբեջանը, Թուրքիան, ԱՄՆ-ն, ԵՄ-ն նկատի չունեմ: Խոսքը ներքին՝ հայաստանյան հովանավորների մասին է: «Ուժեղ Հայաստանը» ճանաչո՞ւմ է նրանց, պատկերացում ունի՞, թե ինչերի են ընդունակ այդ հովանավորները: Նրանք, օրինակ, կարող են հայտարարել, որ ընդդիմադիր դաշտը կհամախմբվի միայն Սամվել Կարապետյանի շուրջ, իսկ հետո կանգնել ու արդարանալ, թե իրենց համար անհասկանալի պատճառներով՝ «Ուժեղ Հայաստանի» հետ համագործակցությունը չստացվեց: Եթե դա աներ մի մարդ, որի համար այս աշխարհում դեռ անհասկանալի որեւէ բան կա, կասեի՝ հա: Եվ ակամա հիշում ես փորձված աղվեսի մասին հին պատմությունը, էն, որ երկու ոտքով է ընկնում թակարդը: Մարդ Աստծո, բա եթե դու Նիկոլի ու ՔՊ-ի հայաստանյան հովանավորը չես, ինչո՞ւ ես հանրության ու ողջ ընդդիմադիր դաշտի առաջ գաղտնաբառերով խոսում: Ի՞նչ է նշանակում՝ համագործակցությունը չստացվեց «մեզ համար անհասկանալի պատճառներով»... Սամվել Կարապետյա՞նը մերժեց: Չեմ կարծում, թե Սամվել Կարապետյանն այն վիճակում է, որ ձեզ «տենց» չորով մերժեր ու պատճառն էլ չասեր: Հավանաբար, դուք եք ձեզ ցույց տվել ձեր ողջ պերճանքով ու թշվառությամբ, ձեր հիմար պահանջներով ու քաղաքագիտական տխմար վերլուծություններով: Ինչեւէ...

Փորձված աղվեսների թիվը սրանով չի ավարտվում: Ավելին ասեմ՝ կան ավելի արդիական փորձված աղվեսներ, որոնք Նիկոլին հովանավորում եւ փորձում են վերարտադրել իրենց ձեւով: Կարճ ասած՝ գիտությունով են չալում: Զորօրինակ՝ հայտարարում են, որ ընտրություններին չեն մասնակցելու, բայց ընդդիմությանն աջակցելու են թիկունքից: Թե բա՝ չենք ուզում ընդդիմության ձայները փոշիացնել: Եթե այսպիսի բան հայտարարեր որեւէ մարդ-կուսակցություն, ես կխոնարհվեի նրա ազնվության առաջ: Բայց կոնկրետ այս ուժի պարագայում ակամա ապշահար ես լինում... Ո՞նց, դուք, ախր, միայնակ էլ մասնակցեք ընտրություններին, կհաղթահարեք անցողիկ շեմը եւ հենց դրանով կաջակցեք ընդդիմությանը: Ուժեղ մարզային կառույցներ ունեք, գրասենյակներ, մարդկային եւ ֆինանսական լրջագույն ռեսուրսներ, կառավարման հսկայական փորձ... Ու մեկ էլ՝ այսպիսի խղճուկ հայտարարությո՞ւն: Գոնե ասեիք՝ «ընդդիմությանը տակից» կաջակցենք: Այդպես ավելի հեշտ կլիներ թաքցնել ձեր իրական մտադրությունը, որ մոտավորապես այս տեսքն ունի. «կամ մենք պետք է լինենք իշխանություն, կա;մ Նիկոլը»: Ինձնից մի նեղացեք, խնդրում եմ: Իմ հարցը հետեւյալն է՝ եթե չունեիք ինչ-ինչ հետին մտքեր, ինչ-ինչ անհաղթահարելի պատճառներ, ինչո՞ւ հրաժարվեցիք Նիկոլի հետ ուղիղ եւ անվանական «առճակատումից»: Ես էլ կարող եմ հայտարարել՝ աջակցելու եմ ընդդիմությանը, իսկ հետո իմ կողմնակիցներին գործուղել Ֆեյսբուք՝ ընդդիմադիր դաշտի ամենաազդեցիկ ուժերից մեկի դեմ պայքարելու եւ նրա ձայները չեզոքացնելու անպատկառ ծրագրով: Ընդդիմադիր դաշտում ընդամենը 4 ուժ կա այս պահին, ինչո՞ւ չաջակցեցիք նրանցից որեւէ մեկին, որ հետո ծուռումուռ հայտարարություններ չանեիք: Ամբողջ թիմով աջակցեիք Սամվել Կարապետյանին, որ բոլոր հարցումներով առաջ է Նիկոլից: Չեք արել, ուշացել եք, չի բացառվում՝ միտումնավոր: Այո, միտումնավոր, որովհետեւ նպատակը, ինչպես վերեւում ասացի, այլ է. «եթե մենք չենք լինելու իշխանություն, ուրեմն թող Նիկոլը վերարտադրվի»: Գիտե՞ք, վաբանկ կարելի է գնալ բոլոր սիտուացիաներում, բացառությամբ երկրի համար ճակատագրական իրավիճակների: Թող ձեզ չթվա, թե, հա, Արցախը տվեցինք, խաղաղություն է, կարելի է նաեւ քաղաքական աճպարարությամբ զբաղվել: Լավ կանեք՝ սա մտապահել. առավել արդիական աղվեսները, երբ սկսում են տրվել ինքնամոռացության, չորս ոտքով են հայտնվում թակարդում:

ՀԳ. *Պարոնայք Սամվել Կարապետյան եւ Գագիկ Ծառուկյան, ձեր «տապանների» դռները փակ պահեք անհասկանալի պատճառներով համագործակցել չկարողացողների եւ թիկունքից բրթողների առաջ: Խառը ժամանակներ են, Նիկոլի հայաստանյան հովանավորների պակաս էլ չկա:*

ՀԳ1. *Պարոն Թաթոյան, այս հոդվածը նաեւ քեզ համար եմ գրել: Դու էլ ես նոր մարդ հայաստանյան քաղաքական դաշտում: Վիճակդ ո՞նց է՝ ըստ «Գելափի»... Բայց դու մի հուսահատվիր, որովհետեւ ընդդիմությունը քայքայողների զորահանդեսի հրամանատարը դու ես, եւ այդ զորահանդեսը քեզ է բրթելու առաջ, հենց տեսնի՝ Նիկոլը պարտվում է:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՍՏԱՏՈՒՍ ՔՎՈՅԻ ՑԱՆԿԱՑԱԾ ՃԳՆԱԺԱՄ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԱԶԴՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎՐԱ

«Հրապարակի» զրուցակիցը վրացի քաղաքագետ ***Գելա Վասաձեն*** *է:*

- Իլհամ Ալիեւն ապրիլի 6-ին պետական այց կատարեց Վրաստան, որտեղ հանդիպեց նախագահ Միխայիլ Կավելաշվիլու եւ վարչապետ Իրակլի Կոբախիձեի հետ: Բանակցությունների առանցքում տարածաշրջանային նոր իրողությունների պայմաններում երկկողմ քաղաքական եւ տնտեսական կապերն էին: Ի՞նչ ընդհանուր շահեր ունեն Թբիլիսին եւ Բաքուն, օրակարգում ո՞րն է ավելի առաջնային:

- Իլհամ Ալիեւի պետական այցը Թբիլիսի կարեւոր է ոչ թե այն պատճառով, որ կողմերը կրկին վերահաստատեցին իրենց բարեկամությունը: Դա երկրորդական է: Ավելի կարեւոր է մեկ այլ բան. Բաքուն եւ Թբիլիսին մնում են Հարավային Կովկասի արեւմտյան մուտքի երկու հիմնական հենասյուները դեպի լայն աշխարհ: Եվ ներկայիս իրավիճակում նրանց ընդհանուր շահը ոչ միայն երկկողմ հարաբերությունների պահպանումն է, այլեւ տարածաշրջանի առանձին, արտաքին վերահսկողության տակ գտնվող տարածքների քայքայումը կանխելը: Առաջնահերթությունը տարանցիկ, լոգիստիկ, էներգետիկ եւ միջանցքների ընդհանուր կառավարումն է՝ ոչ թե վերացական իմաստով, այլ՝ բառացիորեն. ով վերահսկում է ենթակառուցվածքները, ազդում է տարածաշրջանի քաղաքական ճարտարապետության վրա: Ադրբեջանն այսօր Հարավային Կովկասի հիմնական ռեսուրսների եւ լոգիստիկ խաղացողն է: Վրաստանը Սեւ ծով մուտքի հիմնական ճանապարհն է: Միասին այս երկու գործոնն աշխատում են: Առանձին-առանձին դրանք չեն գործում: Երկրորդ առաջնահերթությունը քաղաքական համակարգումն է տուրբուլենտության պայմաններում: Տարածաշրջանը հայտնվել է թուլացած, բայց դեռեւս վտանգավոր Ռուսաստանի, ճգնաժամային Իրանի, վերադարձող ամերիկյան հետաքրքրության եւ Եվրոպայի՝ որպես քաղաքական դերակատարի, թուլության միջեւ: Այս պայմաններում Բաքուն եւ Թբիլիսին միմյանց կարիքն ունեն ոչ թե խորհրդանիշների, այլ մանեւրելու տարածք պահպանելու համար: Եվ վերջապես, երրորդ առաջնահերթությունը տարածաշրջանային հետագա անկայունացման կանխումն է, որովհետեւ Իրանի, Հայաստանի, տրանսպորտային միջանցքների կամ Ռուսաստանի կողմից ստատուս քվոյի վերանայման հետ կապված ցանկացած խոշոր ճգնաժամ առաջին հերթին ազդում է Վրաստանի եւ Ադրբեջանի վրա:

- Իսկ ի՞նչ է ակնկալում Թբիլիսին Բաքվից. օրինակ, Ադրբեջանի մասնակցություն Վրաստանի տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացմանը, լոգիստիկայի եւ էներգետիկ հարցերի վերաբերյալ երաշխիքներ եւ այլն:

- Թբիլիսին Բաքվից ակնկալում է կանխատեսելիություն եւ մասշտաբ: Ոչ թե բարեկամական ժեստեր, այլ՝ տարածաշրջանային խոշոր խաղացողի կանխատեսելիություն: Նախ, Վրաստանին Ադրբեջանն անհրաժեշտ է որպես վրացական ենթակառուցվածքների հզորության եւ ռազմավարական նշանակության երաշխավոր: Սա վերաբերում է երկաթուղիներին, նավահանգիստներին, տարանցիկ երթուղիներին, էներգետիկ գծերին, ապագա էլեկտրաէներգիայի նախագծերին եւ, հնարավոր է, ավելի լայն լոգիստիկ կենտրոններին: Երկրորդ. Թբիլիսին ակնկալում է, որ Ադրբեջանը ներդրումներ կկատարի ամբողջ տարածաշրջանային համակարգի կայունության մեջ: Այլ կերպ ասած, հարցն այլեւս միայն նավթի եւ գազի մասին չէ: Հարցն այն է, թե արդյո՞ք Վրաստանը կներառվի տարածաշրջանային զարգացման հաջորդ փուլում՝ Միջին միջանցքից մինչեւ էներգետիկ անցում: Երրորդ. վրացական իշխանությունները քաղաքական ազդանշան են սպասում Բաքվից առ այն, որ չնայած Վրաստանի արտաքին քաղաքականության բոլոր դժվարություններին՝ Ադրբեջանը չի հեռանա Թբիլիսիից: Սա հատկապես կարեւոր է Վրաստանի ներկայիս իշխանությունների համար, քանի որ նրանք խնդիրներ ունեն ինստիտուցիոնալ Արեւմուտքի եւ Եվրոպայի հետ, եւ, հետեւաբար, ուժեղ հարեւանների հետ երկկողմ կապերը հատկապես արժեքավոր են:

- Ադրբեջանական երկաթուղով Վրաստանի տարածքով դեպի Հայաստան բեռնափոխադրումներ են իրականացվում՝ տասնամյակների դադարից հետո: Վրաստանն այս գործընթացի կարեւորագույն հանգույց է դարձել: Որքանո՞վ է Թբիլիսիի համար կարեւոր ՀՀ եւ Ադրբեջանի միջեւ ձեւավորվող կոմերցիոն կապը՝ ոչ միայն զուտ սեփական տնտեսական շահի տեսանկյունից:

- Թբիլիսիի համար սա կարեւոր է ոչ միայն տնտեսապես: Գլխավորը քաղաքական եւ ռազմավարական տրամաբանությունն է: Եթե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սկսեն զարգանալ առեւտրատնտեսական հարաբերություններ, նույնիսկ եթե դրանք սահմանափակ եւ տեխնիկական են, դա նշանակում է նոր խոշոր հակամարտության հավանականության նվազում: Իսկ Վրաստանի համար սա կարեւոր նշանակություն ունի, որովհետեւ Վրաստանը շահում է ոչ թե առեւտրից՝ որպես այդպիսին, այլ այն փաստից, որ տարածաշրջանը դառնում է պակաս ռազմականացված եւ ավելի շատ տարանցիկ: Իդեալական դեպքում Վրաստանը ցանկանում է Հարավային Կովկասը տեսնել որպես մրցակցող, բայց փոխազդող պետությունների տարածք, այլ ոչ թե արտաքին ուժի կենտրոնների միջեւ սահման: Սա է պատճառը, որ Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ցանկացած քայլ օբյեկտիվորեն ամրապնդում է Թբիլիսիի դիրքերը: Ոչ թե այն պատճառով, որ Թբիլիսին դառնում է միջնորդ, այլ՝ այն, որ արտաքին խաղացողների կողմից միշտ շահագործվող ռազմավարական քաոսի մի մասը վերանում է: Ավելին, եթե հայ-ադրբեջանական կապերն ընդլայնվեն, Վրաստանը կարող է հաստատվել որպես առեւտրի, լոգիստիկայի, ապահովագրության, ծառայությունների եւ քաղաքական հաղորդակցության բնական հարթակ: Սա այլեւս թե միայն եկամուտների, այլ Վրաստանի տարածաշրջանային դերի հարց է:

- Ինչպե՞ս կգնահատեք Վրաստանի իշխանությունների վարած արտաքին քաղաքականությունը: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ի հետ կապերն այնքան էլ լավ չեն, ԵՄ-ի հետ առկախված են, ՌԴ-ի հետ՝ բացասական: Թբիլիսին համեմատաբար լավ հարաբերություններ ունի պաշտոնական Երեւանի հետ՝ 2024-ից ի վեր Փաշինյանը 4 անգամ Վրաստան է այցելել:

- Ավելի ճշգրիտ լինելու համար՝ Վրաստանի ներկայիս կառավարության հիմնական խնդիրն այն է, որ այն թուլացրել է իր արտաքին քաղաքականության ինստիտուցիոնալ հենասյուները: Վրաստանն ավանդաբար ամուր ինստիտուցիոնալ կապեր է ունեցել ԱՄՆ-ի, ԵՄ-ի՝ որպես համակարգի, առանձին եվրոպական պետությունների, ինչպես նաեւ՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ: Այժմ այս արեւմտյան շրջանակի զգալի մասը կամ վնասված է, կամ սառեցված, կամ խոր անվստահության մեջ է: Ռուսաստանի հետ ինստիտուցիոնալ հարաբերություններ չկան՝ բառի դրական իմաստով. գործընկերություն չկա, այլ կառուցվածքային հակամարտություն կա: Վրաստանի հարաբերություններն Իրանի հետ սահմանափակ են: Չինաստանի հետ քաղաքական աջակցության մակարդակ չկա, որը կարող է փոխարինել Արեւմուտքին: Այլ կերպ ասած՝ խաղադաշտը նեղացել է: Այս ֆոնին ՀՀ-ի հետ լավ հարաբերությունները նկատելի են: Փաշինյանի Թբիլիսի կատարած հաճախակի այցելությունները ցույց են տալիս, որ վրաց-հայկական կապը գործում է: Բայց մենք չպետք է մոլորության գիրկն ընկնենք. միայն Երեւանի հետ լավ հարաբերությունները չեն լուծում ռազմավարական մեկուսացման խնդիրը: Դրանք օգտակար ակտիվ են, բայց ոչ համակարգային փոխարինող: Հետեւաբար, Վրաստանի իշխանությունների արտաքին քաղաքականությունը, բազմավեկտոր չէ, այլ փորձ է՝ գոյատեւելու իրավիճակային երկկողմանի կապերի միջոցով: Սա մարտավարական առումով հնարավոր է, բայց ռազմավարական առումով թույլ մոդել է:

- Եթե խոսենք Հարավային Կովկասի՝ որպես ինքնիշխան, ռազմավարական միասնական տարածքի մասին, ապա պետք է նշել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության կարեւորությունը, ինչն ընդունում են նաեւ Վրաստանում: Տարածաշրջանը դո՞ւրս է գալիս խոշոր խաղացողների ազդեցության գոտիներից, թե՞ գործ ունենք Արեւմուտք-ՌԴ դասական առճակատման հետ:

- Ոչ, տարածաշրջանը դեռեւս դուրս չի եկել իր ազդեցության ոլորտներից: Վաղաժամ կլինի դա ասելը: Բայց ամեն ինչ դիտարկել «Արեւմուտքն ընդդեմ Ռուսաստանի» դասական սցենարի դիրքերից՝ այլեւս բավարար չէ: Հարավային Կովկասն այժմ ավելի բարդ փուլում է: Մի կողմից, Ռուսաստանն օբյեկտիվորեն կորցրել է իր կամքը թելադրելու կարողության մի մասը, սա փաստ է: Նրա ռազմական, տնտեսական եւ քաղաքական ռեսուրսները սպառվել են, եւ նրա վերահսկողության մոդելն այլեւս չի թվում միակ կենսունակ տարբերակը: Մյուս կողմից, Ռուսաստանը ոչ մի տեղ չի գնացել եւ շարունակում է տարածաշրջանը դիտարկել որպես մի տարածք, որը չի կարող լիովին կորչել: Արեւմուտքը նույնպես չի գործում որպես միասնական միավոր: ԱՄՆ-ն ունի մեկ տրամաբանություն, ԵՄ-ն՝ մեկ այլ, իսկ առանձին եվրոպական երկրները՝ երրորդը: Թուրքիան եւ Ադրբեջանն անկախ խաղացողներ են: Հայաստանը կառուցում է սեփական սուբյեկտայնությունը, եւ Իրանը, չնայած ճգնաժամին, նույնպես ազդում է տարածաշրջանի վրա: Հետեւաբար, ավելի ճշգրիտ կլինի ասել հետեւյալը. Հարավային Կովկասը չի խուսափել խոշոր խաղացողների միջեւ մրցակցությունից, բայց երկար ժամանակ անց առաջին անգամ այն ստացել է իր ինքնիշխանության հնարավորություն: Եվ այս ինքնիշխանության հիմնական պայմանը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղությունն է: Քանի դեռ նրանց միջեւ պատերազմի հնարավորությունը մնում է, տարածաշրջանի նկատմամբ արտաքին վերահսկողությունը միշտ կվերադառնա անվտանգության, միջնորդության, պարտադրված երաշխիքների եւ արտաքին ռազմական ձեւաչափերի միջոցով:

- Որոշ վերլուծաբաններ պնդում են, որ Իրանի դեմ ամերիկա-իսրայելական պատերազմը նավթի եւ դոլարների համար պատերազմ է: Մեծ հաշվով՝ ցանկացած ռազմական հակամարտության խորքում տնտեսական բաղադրիչն է: Տնտեսական ի՞նչ ռիսկեր եւ միաժամանակ հնարավորություններ կան մեր տարածաշրջանի երկրների համար: Հայաստանում, օրինակ, աճել են ԱՄԷ-ից ֆինանսական հոսքերը:

- Նախ, պետք է մի կողմ դնենք «պատերազմներ՝ միայն նավթի եւ դոլարների համար» պատմությունը: Սա չափազանց պարզունակ բանաձեւ է: Ցանկացած պատերազմում միշտ կա տնտեսական շահ, բայց ամեն ինչ դրանով սահմանափակելը նշանակում է սխալ հասկանալ ուժի քաղաքականությունը: Իրանի դեմ պատերազմը, եթե խոսքը խոշոր ռազմական արշավի մասին է, միաժամանակ վերաբերում է Իսրայելի անվտանգությանը, ամերիկյան գերիշխանությանը, Մերձավոր Արեւելքի ճարտարապետությանը, էներգետիկ ուղիներին, շուկայական վախերին եւ խաղի ապագա կանոնների նկատմամբ վերահսկողությանը: Հարավային Կովկասի երկրների համար հիմնական ռիսկն աճող անկայունությունն է: Ոչ թե վերացական, այլ կոնկրետ՝ լոգիստիկ ծախսերի աճ, նավագնացության խափանումներ, էներգակիրների գների բարձրացում, արժույթի եւ ֆինանսական շուկաների վրա ճնշում, առեւտրային ուղիների հետ կապված խնդիրներ եւ ստվերային սխեմաների աճ: Եթե Իրանի շուրջ իրավիճակը լրջորեն վատթարանա, ամբողջ տարածաշրջանը կմտնի անկայունության գոտի: Կա եւս մեկ կետ: Իրանի շուրջ ցանկացած ճգնաժամ մեծացնում է այլընտրանքային ուղիների՝ Միջին միջանցքի, Սեւ ծովի կապի եւ Հարավային Կովկասի հաղորդակցությունների կարեւորությունը: Տեսականորեն սա հնարավորություն է ամբողջ տարածաշրջանի համար: Սակայն այս հնարավորությունն աշխատում է միայն այն դեպքում, երբ կա քաղաքական համակարգում եւ առնվազն նվազագույն ներտարածաշրջանային կայունություն: Եթե Հարավային Կովկասը մնում է հակամարտության գոտի, չի դառնում այլընտրանք՝ այն դառնում է խնդրի մի մասը:

Արա ԱԼՈՅԱՆ

ԼՈՌԻ

ԴՍԵՂԻ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ. ԳՅՈՒՂԻ, ԱՆՄՇԱԿ ՀՈՂԵՐԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԿՐԻ ԱՂՄԿՈՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընտրություններից երկու ամիս առաջ երկրում ներքաղաքական լարումը, ինչպեսեւ սպասելի էր, ահռելի չափերի է հասել: Անգամ քաղաքականությամբ «երդվյալ չզբաղվողները» հաճախ չեն պահպանում «չխառնվելու» իրենց որոշումը, հայտնվում են վիճաբանությունների կիզակետում:

Մեծ Թումանյանի ծննդավայր Դսեղում մի խումբ դսեղցիների հետ բարձունքում կանգնած՝ զրուցում էինք: Մեր առջեւ իր ողջ գեղեցկությամբ փռված էր գյուղը՝ շրջապատված կանաչող դաշտերով: Բայց այդ կանաչը խաբուսիկ էր՝ դա այն կանաչը չէր, որ հողագործի աշխատանքի արդյունքն է, այլ՝ այն, որ ծնվում է անտերությունից: Կար ժամանակ, որ այս օրերին դաշտերը սեւին էին տալիս՝ վարած, պատրաստ ցանքի՝ ցորենի, գարու, կարտոֆիլի: Կյանք կար այդ սեւ հողի մեջ: Իսկ հիմա լուռ կանաչ է, որի տակ դատարկություն է: Գյուղացիներից մեկը, աչքը դաշտերին, ասաց. «Առաջներում ոչ մի սանտիմետր հող պարապ չէր մնում: Հիմա տես՝ ինչ վիճակ է: Այս ի՞նչ օրի հասանք...»: Մյուսը շարունակեց. «Ո՞վ է մեղավոր: Հող մշակելը դարձել է ավելորդ հոգս: Ցանում ես՝ գերի դառնում հողին, հետո բերքը կամ երաշտը կվերցնի, կամ կարկուտը կտանի: Վերջում մնում ես դատարկ ձեռքով»:

Պարզեցի, որ մոտ 700 հեկտար հողերից ամեն տարի հազիվ 100-ն է մշակվում: Սա միայն իմ սիրելի գյուղի եւ պարզապես մի գյուղի խնդիր չէ: Այս իրականությունը խոսում է համակարգային փլուզման մասին: Մեր դիմաց՝ ահռելի ձորի հակառակ սարահարթում Ծաթեր գյուղն էր, որն ասես Դսեղի շարունակությունը լինի: Կողքին Այգեհատ, Օձուն, մի փոքր այն կողմ Մղարթ, Ամոջ, Արեւածագ գյուղերն են: Տարբեր անուններ՝ նույն ճակատագիրը, նույն հոգսերը՝ ջուր կա, բայց չի հասնում. ցանցերը մաշված են: Ծախսերը՝ մեծ: Կարկուտի, տարերային աղետների դեպքում մշակը՝ շվար, անօգնական: Հիշեցի ծաթերցի ծանոթիս հուսահատությամբ լի խոսքը. «Էլ չենք կարող հողը նորմալ մշակել: Անտանելի դժվար է՝ սակագները երկինք են հասնում»: Իսկ օձունցի Պոստին ավելի կոշտ էր ձեւակերպել. «Ախպերս, աչքերդ բաց՝ տես ուր են հասցրել երկիրը. գյուղատնտեսություն չկա: Հողերը պարապ են: Կարծում ես՝ գյուղացին չի՞ ուզում աշխատել: Հնար չունի... 10 րոպեում կարկուտը կարող է ոչնչացնել տարվա աշխատանքը: Իսկ հետո՞: Ոչ ոք պատասխան չի տա...»: Եվ թվարկում էր՝ տեխնիկա չկա, պարարտանյութը թանկ է, ջուրը՝ խնդրահարույց, ապահովագրությունը՝ ձեւական:

Դսեղցիները հիշեցին հին համակարգը՝ կոլխոզ, սովխոզ: Պարտադիր էր նոր հողեր մշակելը, ճահիճ չորացնելը, քարուքանդ մաքրելը՝ վարելահող դարձնելու: Այսօր ո՛չ պարտավորություն կա, ո՛չ պատասխանատու. «Առաջ ձորում հոսող Մարցագետից պոմպերով ջուր էինք բարձրացնում, «Ծովեր» կոչվող լճակ էինք լցնում, հետո հասցնում դաշտերին: Տեր կար: Հիմա անտերության հետեւանքով խողովակները չկան՝ հանվել, թալանվել են: Պապակ դաշտերը մի պուտ ջուր չեն ստանում»:

Այս խոսքերը պարզապես անցյալի մասին կարոտ չեն՝ համեմատություն են ներկայիս վերաբերմունքի ու կառավարման որակի մասին: Զրույցը «գյուղական դաշտերից» կամաց անցավ քաղաքականության դաշտ: Մեկը դժգոհությամբ ասաց. «Իշխանությունները ոչ մի լուրջ քայլ չեն արել գյուղացու համար: Ամեն ինչ կամ ցուցադրական է, կամ՝ կիսատ...»: Մյուսն ավելացրեց. «Ասես դիտավորյալ՝ գյուղատնտեսության նախարարություն անգամ չունենք: Սա ինչի՞ նշան է, եթե ոչ անտարբերության... կամ՝ դիտավորության»: Բայց հակադրվող էլ կար՝ մեկը, որ մինչ այդ չէր խոսում, զայրացած հարցրեց. «Ուզում ես ասել՝ Նիկո՞լն է մեղավոր: Ընտրե՞նք նրան: Հնե՞րը գան...»: Պատասխանը հստակ էր. «Խոսքը հների մասին չէ: Խոսքը նոր ուժերի մասին է: Պետք է գնալ ու ընտրել...»: Խոսքը մնաց բերանում. «Բոլորն էլ նույնն են... Ես Նիկոլին եմ ընտրելու: Էս քանի օրը սրտիս ստենտ դրեցին անվճար, դեղերս տվեցին: Ինչո՞ւ չընտրեմ, որ...»: Մյուսը լրացրեց. «Բա ասֆա՞լտը՝ մեքենաս առանց ջարդելու տեղ հասա: Ախպեր, թող մեր տեսած գեղը մեզ ուտի... »: Մտածողությունների իսկայական տարբերություն՝ Լոռու անդնդախոր ձորի չափ ահռելի տարբերություն: Կան մարդիկ, որոնց համար սոցիալական փոքր բարելավումը բավարար է, նրանք համակարգային կորուստները չեն տեսնում, իրենց փոքրիկ շահն են նկատում միայն: Կան մարդիկ էլ, որոնք գյուղատնտեսության փլուզումը, արդյունաբերության բացակայությունը, պետական պարտքի աճը չեն կապում իրենց կյանքի հետ: Մինչդեռ խելացի ժողովուրդն իրեն հարցեր կտար, որոնց պատասխանը չկա՝ գյուղատնտեսությունը պետական հոգածության առարկա՞ է արդյոք, արդյո՞ք արդյունաբերությունն առաջնահերթություն է, արդյո՞ք կա կրթություն-գիտություն-արտադրություն շղթան, եւ այս բոլորի կառավարումն ինչպե՞ս է այսօր իրականացվում: Չէ՞ որ պարզ տեսանելի է՝ մեր պետության պարտքերն աճում են ու աճում, օրերս եւս 400 միլիոն դոլար պարտք վերցրին, եւ դա այս գյուղացիների ժառանգներն են փակելու: Այսինքն, իրենց թոռներն այսօր պետական պաշտոնյաների պարգեւավճարների «սպոնսորն» են, պաշտոնյաներ, որոնց մեղքով գյուղերը դատարկվում են, հողերը չեն մշակվում, ջուր չունեն, դպրոցներ են փակվում...



Բայց գյուղում էլ կան խելացի, մտածող մարդիկ. «Ամեն ինչ միտումնավոր է արվում: Քանդում են գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, որ երկիրը թուլանա: Երկրի ուժեղ լինելը ՔՊ-ի ծրագրային փաթեթի մեջ չի եղել ու չկա»: Սա արդեն սոսկ դժգոհություն չէ, համոզմունք է, որը ձեւավորվել է տարիների ընթացքում, եւ այն տարածվում է: Օձունցի Պոստին ասում էր. «Պարտվել ենք, կորցրել ենք, կոտրվել ենք... բայց հետո էլ չենք փորձել կանգնել: Միայն մեղավոր ենք փնտրել... Ամեն ամիս մի նոր նախանշ, մի նոր զիջում... սա չի կարող անվերջ շարունակվել...»: Բայց նաեւ մեղադրանք կա խոսքերում՝ ուղղված նրանց, ովքեր իրենց ընդդիմադիր են համարում. «Մինչ դուք իրար մեջ հարցեր եք լուծում, դաշինքներ եք կազմում ու քանդում, երկրորդական հարցերի մասին եք վիճում, ընտրությունների գնացքը գնում է: Արագ: Անխափան: Եվ՝ առանց ձեզ: Թունելին է հասել»: Գյուղերում պատկերն այլ է, քան քաղաքներում: Այստեղ դեռ հավատում են կամ՝ հարմարվել են: Եկեք, այցելեք գյուղեր: Խոսեք մարդկանց հետ: Բացատրեք: Որովհետեւ եթե չանեք, թունելի վերջի լույսը մեզ չի ժպտա: Եթե այսպես շարունակվի, այդ լույսը տեսնելու է ատամները սրած ազերին, որն անհամբերությամբ սպասում է այս ընտրությունների ավարտին... եւ մեջբերեմ մի մտավորականի խոսք. «Եվ այդ ժամանակ արդեն ուշ կլինի: Ոչ միայն ձեզ համար, այլեւ՝ երկրի: Եթե չփոխվի մոտեցումը, այս ընտրությունը կարող է լինել ոչ թե հնարավորություն, այլ՝ վերջին փորձ, որից հետո գուցե այլեւս ընտրելու ոչինչ չմնա»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՄՆ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՖՐԱՆԿԼԻՆ ՌՈՒԶՎԵԼՏԸ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը 20-րդ դարի ամենահայտնի քաղաքական-պետական գործիչներից է, որի կյանքն ու գործունեությունն ամենաշատ ուսումնասիրվողներից է: Նա առանցքային նշանակություն է ունեցել Միացյալ Նահանգներում Մեծ դեպրեսիայի հաղթահարման, «Նոր կուրսի» քաղաքականության մշակման ու իրականացման գործում, զգալի ներդրում է ունեցել երկրորդ աշխարհամարտում ֆաշիզմի պարտության մեջ: Նրա կյանքն ու գործունեությունն ուսումնասիրում են թե՛ պատմաբանները, թե՛ քաղաքագետները, թե՛ գրողները: Նաեւ ԱՄՆ ամենաշատ նկարագրված նախագահն է: Ներկայացնենք մի քանի առավել նշանակալի հեղինակների, ովքեր գրքեր են հեղինակել Ռուզվելտի մասին՝ ուսումնասիրելով նրա կյանքն ու գործունեությունը: Ամենահայտնի կենսապատումներից մեկը Ժան Էդվարդ Սմիթի «ՖԴՌ» կենսագրական գիրքն է: Այն ստանդարտ գիտական կենսապատումն է, որը համադրում է անձի խորը անալիզ ու քաղաքական գործունեության համապարփակ ուսումնասիրությունը: Հաջորդիվ Ջեյմս ՄաքԳրեգոր Բյորնսի 1956թ. «Ռուզվելտ. առյուծը եւ աղվեսը» եւ 1970թ. «Ռուզվելտ. ազատության մարտիկը» երկհատոր աշխատությունն է: Երկրորդ հատորը ստացել է Պուլիտցերյան մրցանակ: Այս աշխատությունները երկար ժամանակ համարվել են դասական չափորոշիչ, այսպես ասած, ռուզվելտագիտության համար եւ մինչ այժմ էլ ակադեմիական-ամերիկանիստների շրջանում մեծ հեղինակություն եւ կիրառություն ունեն: Դորիս Քիրնս Գուդվինն իր No Ordinary Time գրքում ուսումնասիրում է երկրորդ աշխարհամարտի տարիներին Ռուզվելտի եւ նրա կնոջ՝ Էլեոնորայի կյանքն ու գործունեությունը: Այս աշխատության առանձնահատկությունն այն է, որ այստեղ օգտագործված են 86 վկայի բանավոր հարցազրույցները: Ռոբերտ Դալեքը Ռուզվելտին նվիրված իր գրքում վերլուծում է նրա քաղաքական ռազմավարությունն ու լիդերությունը՝ ընդգծելով կոմպրոմիսի եւ երկարաժամկետ հեռանկարի կտրվածքով մտածողության կարեւորությունը պետության կառավարման գործում: Քոնրադ Բլեյքը Ռուզվելտին նվիրված իր գրքում իրականացնում է կենսագրության քաղաքական մեկնաբանություն, որում Ռուզվելտը ներկայացված է որպես ժամանակակից աշխարհի ձեւավորման ակունքներում կանգնած գործիչ: Հ. Վ. Բրանդսը՝ ընդհակառակը, փորձում է վեր հանել Ռուզվելտի վարած սոցիալական քաղաքականության ու արիստոկրատական ծագման հակասականության հետ կապված հարցը: Բրանդսի աշխատությունը ներկայում ամենալայն ճանաչում ունեցող կենսապատումներից է՝ նվիրված Ֆ. Դ. Ռուզվելտին: Հեղինակ Ջոնաթան Ալթերը մենագրություն է հեղինակել՝ նվիրված Ռուզվելտի «Նոր կուրսին» եւ նախագահության առաջին 100 օրվան: Ռոբերտ Հ. Ֆերելն իր մենագրությունում անդրադարձել է Ռուզվելտի կյանքի վերջին տարիներին նրա հիվանդության՝ կայացրած որոշումների վրա ունեցած ազդեցությանը: Եվ, ի վերջո, Էլեոնորա Ռուզվելտի հուշերն արժեքավոր սկզբնաղբյուր են՝ նախագահի անձնական կյանքի եւ շրջապատի վերաբերյալ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԵՋԸ ՓՈՒՉ» ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. մայիսին, մինչ Երեւանում քաղաքական թատրոնթավշյա հեղափոխությամբ իշխանափոխություն էր ընթանում, Նախիջեւանի հետ սահմանին ՀՀ տարածքի մեծ հատվածներ անցան Ադրբեջանի զինուժի վերահսկողությանը: 44-օրյա պատերազմից, 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ընդունումից հետո՝ 2020-2024 թվականներին, ՀՀ մարզերի սահմանագոտում առանց մարտերի ու մարտերով մեծ տարածքներ հանձնվեցին Ադրբեջանի զինուժին:

2026 թ. մարտի 17-ին տեղեկատվական հարցում եմ արել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին.

«1. 2018-2020 թվականներին ադրբեջանական զինուժը ՀՀ տարածքից, սահմանագոտուց մոտավոր որքա՞ն քառակուսի կիլոմետր տարածք է օկուպացրել, Հայաստանի ո՞ր մարզում:

2. 2020 թվականից հետո ադրբեջանական զինուժը ՀՀ տարածքից, սահմանագոտուց մոտավոր որքա՞ն քառակուսի կիլոմետր տարածք է օկուպացրել, Հայաստանի ո՞ր մարզում՝ որքա՞ն»:

Մարտի 23-ին ՊՆ-ից էլեկտրոնային փոստով նամակ եմ ստացել, որտեղ նշված է. «Ձեր հարցմանն ի պատասխան տեղեկացնում ենք, որ հարցման մեջ նշված տեղեկությունները տրամադրելու համար լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն կա: Ըստ այդմ՝ հարցման պատասխանը կտրամադրվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում»: Կարծեցի, որ ՊՆ-ն պատասխանն ուշացնում է, որպեսզի հարցերիս վերաբերյալ լրացուցիչ ուսումնասիրություն կատարի ու հանգամանալից, սպառիչ պատասխաններ սա: Սակայն՝ ոչ, ապրիլի 8-ին ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի ստորագրությամբ պատասխան եմ ստացել, որտեղ գրված է. «Ի պատասխան 17.03.2026թ. Ձեր գրավոր հարցմանը՝ հայտնում ենք, որ ներկայացված 1-ին եւ 2-րդ հարցադրումների վերաբերյալ բազմիցս հնչել են պաշտոնական պարզաբանումներ», եւ վերջ:

Նույն հարցման մեջ պաշտպանության նախարարին 3 այլ հարցեր էլ եմ առաջադրել. «3. 2025, 2024 թվականներին եղե՞լ է դեպք, երբ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի սաներից մեկի ծնողն արտերկրից մեծ գումար է նվիրաբերել վարժարանի կարիքների համար: Ե՞րբ է եղել այդ դեպքը, ինչքա՞ն գումար է նվիրաբերել, վարժարանի ո՞ր կարիքների համար:

4. 2024 եւ 2025 թվականներին ընդունելության համար որքա՞ն իրավաբանական անձանցից որեւէ գումար չի նվիրաբերվել: Հիմնադրամը նշված տարիներին ֆինանսավորվել է բացառապես պետական բյուջեով նախատեսված գումարի չափով: Նշված տեղեկության հիմք են հանդիսանում հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալները: Վ. Սարգսյանի անվան ռազմական մրցակցություն է եղել, մի տեղի համար քանի՞ դիմորդ է եղել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա եւ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան:

5. Ներկայում քանի՞ անձ է մասնակցում «Պաշտպան հայրենյաց» ծրագրին»:

Տեղեկացել էի, որ Մոնթե Մելքոնյանի անվան վարժարանի աշխատողներից մեկը մարզում աշակերտների հետ հանդիպումների ժամանակ պատմել էր, որ վարժարանի սաներից մեկի ծնողը, որն Իտալիայում գործարար է, 150 հազար դոլար է նվիրաբերել՝ ռազմամարզական վարժարանի սաների կարիքների համար, այդ գումարը ծախսվել է սաների հանդերձանքի վրա:

Հիմա տեսնենք, թե ինչ է պատասխանել մեր հարցին ՊՆ-ն. «3-րդ հարցին ի պատասխան նշեմ, որ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան հիմնադրամին 2024-2025թթ. ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից որեւէ գումար չի նվիրաբերվել: Հիմնադրամը նշված տարիներին ֆինանսավորվել է բացառապես պետական բյուջեով նախատեսված գումարի չափով: Նշված տեղեկության հիմք են հանդիսանում հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալները: Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի եւ Մ. Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի դիմորդների թվի վերաբերյալ հարցադրման առնչությամբ նշեմ, որ ռազմական կրթության նկատմամբ տարեցտարի հետաքրքրությունը մեծանում է, եւ նկատվում է դիմորդների թվի էական աճ: Ինչ վերաբերում է 5-րդ հարցին, հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը 2026թ. հունվարի 28-ի իր ելույթի ընթացքում ներկայացրել է «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շահառուների թիվը: Շահառուների թվաքանակի փոփոխության մասին պաշտպանական գերատեսչությունը կհայտարարի ըստ անհրաժեշտության»:

ՊՆ ղեկավարությանը թվում է, թե Հայաստանի ամբողջ բնակչությունը, այդ թվում՝ տողերիս հեղինակը, ուշադիր դիտել է ու մտապահել Ս. Պապիկյանի 2026 թ. հունվարի 28-ի ելույթը եւ պետք է իմանար «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շահառուների թիվը: ՊՆ-ի ու ՊՆ գլխավոր քարտուղար Բատիկյանի համար դժվար էր իրենց պատասխանում այդ թիվը ներկայացնելը: Այս անիմաստ՝ «մեջը փուչ», գլխառադ անող պատասխանի համար չարժեր, որ ՊՆ-ն 23 օր ժամանակ ծախսեր, կարող էր նույն օրը այդ պատասխանն ուղարկել: Իսկ եթե տարրական հարգանք ունենար ՀՀ քաղաքացու եւ լրատվամիջոցների աշխատանքի հանդեպ, երբեք նման պատասխան չէր ուղարկի:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 10.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԲԱՐԴՈՒՅԹԱՎՈՐՎԱԾ ՄԵԿԸ

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Տիկոլական հերթական սուտը՝ «Հայաստանը պատրաստ է բոլոր սցենարներին»: Ոչ, կյանքն անընդհատ ցույց է տալիս, որ Հայաստանը ոչ մի բանի էլ պատրաստ չէ: Ո՛չ արտաքին թշնամու հետ փոխհարաբերությունում եւ ո՛չ էլ տնտեսական միության շրջանակում, որի անդամ է Հայաստանը, ու ինքն էլ, որպես պետության ղեկավար ու վարչապետ, ներկա է միության կառավարչական երկու խորհուրդներում: Եթե պետության ղեկավար ու վարչապետ լիներ ադեկվատ մեկը, ապա սեղանին կունենար հարցերի իրական լուծումներ: Եվ ոչ թե իր նման՝ «լուծումներ» զուտ խոսքի մակարդակում: Հենց միայն Լարսի անցակետում ռուս մաքսավորների վերաբերմունքը հայկական բեռնատարների նկատմամբ վկայում է իրական համակարգային լուծումների բացակայության մասին:

Իսկ իրական լուծումներն էլ կապահովեին առնվազն պետական վերլուծական կենտրոնները: Եվ դրանք էլ կլինեին ոչ թե փաստացի հանգամանքներով պայմանավորված, այլ՝ իրադարձությունների այս կամ այն խմբաքանակի համար նախատեսված, ինչի համար էլ գործում են դրանք՝ ստանալով բյուջետային ֆինանսավորում: Օրինակ, «Օրբելի» վերլուծական կենտրոնը, որը գործում է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կազմում, կամ էլ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որը գործում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմում: Զբաղվում է տնտեսական ու անվտանգային հետազոտություններով: Էլ չասած՝ բազմաթիվ մասնավոր կազմակերպությունների մասին:

Բայց դիտարկելով վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի անկապ որոշումները՝ տեսնում ենք, որ վերոնշյալ կենտրոնները գործում են իրենց համար, իսկ պետության ղեկավարը՝ իր համար: Այսինքն, ինքնուրույն կամ իր մակարդակից ցածր մտավոր մակարդակ ունեցողների հետ հարցեր է քննարկում եւ «լուծումներ գտնում»: Ավելի ցածր մտավոր մակարդակի առումով կասկած չկա, քանի որ անհեթեթ մտքերի ու գործողությունների շարանը վկայում է, որ դիմացիններին բացարձակ մակարդակ չունեն կամ էլ եթե նույնիսկ ունեն, ապա դա այնպես են պահում, որ վերջինս չզգա դրա առկայությունը:

Դա՝ մեկ, եւ երկրորդ. եթե ՀՀ իշխանությունը խնդիրներ է ստեղծում ռուսական հովանավորությամբ ստեղծված միջպետական կառույցների համար, ապա չի կարող չհետեւել արձագանքը՝ անկախ այն բանից, թե ինչ է գրված ԵԱՏՄ կանոնադրության մեջ կամ, ավելի ճիշտ՝ միության կանոնադրությանը համապատասխան: Հատկապես որ ՌԴ նախագահը նման չէ ՀՀ վարչապետի աթոռից կառչած անձին, որը գործում է գեղցիական մեթոդներով: ՌԴ-ում, որքան տեղյակ եմ, կան մի շարք տեսչական մարմիններ: Ու դրանք էլ, ժամանակ առ ժամանակ, «խնդիրներ են հայտնաբերում» ՀՀ-ից Ռուսաստան արտահանվող ապրանքների այս կամ այն տեսականու մեջ, երբ Փաշինյանը հերթական խնդիրն է ստեղծում ՌԴ-ի համար:

Այդ ամենից, բնականաբար, տեղյակ է ամեն հինգշաբթի կառավարության նիստից հետո լրագրողների հարցերին պատասխանող Փաշինյանը: Բայց նա պահում է իրեն ճիշտ այնպես, ինչպես դրա նախորդ օրն Ազգային ժողովում: Ավելի ճիշտ, եթե այնտեղ ինքն իրենից դուրս է գալիս՝ պատասխանելով ընդդիմադիր պատգամավորների ելույթ-հարցերին, ապա կառավարության թիվ 1 շենքում արհամարհական վերաբերմունք է ցուցաբերում իր նախկին գործընկերների նկատմամբ: Տրված կոնկրետ հարցերին պատասխանում է թեմայից դուրս մտքեր հայտնելով: Եվ երբ լրագրողները փորձում են ճշտել, օգտագործում է իր հնարած կաղապարը. «Ես արդեն պատասխանեցի հարցին»: Իհարկե, ինքն իրականում չպատասխանեց հարցին: Բայց շաբաթական այդ ժամը, նախ, օգտագործվում է Արեւմուտքի աչքին թոզ փչելու համար, երկրորդ. իր իշխանության սոցիալական հենարանը հանդիսացողների համար: Բայց այդ մեկ ժամվա ընթացքում իր դրսեւորած վարքը, անկախ իր կամքից, խոսում է տվյալ անձի բարդույթների մասին:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am